

ՓԻԹՈՐ ՍԵՄԵՊԻ.- «ԵՐԱՍԻՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՀԵՏԵՒԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԵ ԵՆԻՍՎ-Ի ԲԱՆԱԶԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ»

Հարաւային Կովկասի մէջ Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչ Փիթըր Սեմեյակի յայտարարած է որ, Եւրամիութիւնը պիտի հետեւի տեսնելու համար թէ, Հայաստան ինչպէս կը կատարէ Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵՆԽՎ) բանաձեւը:

Պատասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի հարցերուն Սեմեյակի ըսած է որ, Բանաձեւի կատարման ընթացքը կը դառնայ այն հիմքը, որմէ ելլելով մենք կը կայացնենք հետագայ որոշումները՝ ինչպէս առաջնորդելի Հայաստանի հետ յարաբերութիւններուն մէջ:

Բանաձեւի յտակ դրոյթներու մասին Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչը ըսած է. - «Կան էական խնդիրներ, պահանջներ, օրինակ՝ այն բոլոր հիմնարար ազատութիւններու վերականգնումը, որոնք սահմանափակուեցան

Շաբ.ը էջ 4

Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՌԱՏԻՕ ՍԵՒԱՆԻ ՀՐԿԻՉՈՒՄԸ

Շաբաթ, Մայիս 10-ի առաւօտեան «Հրգպալլա»-ի գինեակներ մուտք գործելով հայկական «Ռատիօ Սեւան»-ի արեւմտեան Պէյրութի մէջ գտնուող կեդրոնը հրկիզած են գայն:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը յայտարարութեամբ մը եկաւ դատապարտելու Ռատիօ Սեւանի հրկիզումը:

Շաբաթ, 10 Մայիս 2008-ին, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը գումարեց արտակարգ նիստ մը: Նիստի ընթացքին քննարկուեցան Լիբանանի քաղաքական եւ ապահովական վերջին զարգացումները: Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը դատապարտեց լատ-տեսողական միջոցներու դէմ կատարուած խափանարարութիւնները, եւ այս առիթով Ռատիօ Սեւանի հրկիզումը:

Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը խստիւ դատապարտեց Պէյրութի եւ Լիբանանի այլ շրջաններու մէջ, քաղաքացիներու եւ պետական անձնակազմներու կալուածներուն պաշարման փորձերը:

Այս պատասխանատու եւ ճա-

կատարական պահուն, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը հակամարտութեան կողմերուն կողմէ կ'ուղղէ փոխհակացողութեան ու երկխօսութեան ճամբով, լուծելու իրենց միջեւ վիճելի հարցերն ու տարակարծութիւնները յանուն վարդաւան ազատ, գերիշխան եւ անկախ Լիբանանին:

Ընդդիմութեան եւ իշխանաւէտ ուժերուն միջեւ տեղի ունեցող բախումներու ընթացքին Լիբանանահայութիւնը որեւէ կորուստ չէ ունեցած, բացի Ռատիօ Սեւանի հրկիզումէն:

Լիբանանի խորհրդարանի Հնչակեան պատգամաւոր Տօթթ. Եղիկ ձէրէճեան Ազատութիւն ռատիոկայանին յայտնած է որ Ռատիօ Սեւանը կը գործէ կառավարման ուժերու հովանիին տակ, որու պատճառով ալ շաբաթ առաւօտեան դարձած է ընդդիմադիր «Հրգպալլա»-ի շարժման գինեակներու թիրախը:

Ընկ. ձէրէճեան տեղեկացուցած է որ, ռատիոկայանի սփռումը վերսկսած է, մէկ այլ վայրէ:

Ռատիօ Սեւանի տնօրէն Արա Սիսերեան իր կարգին «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է թէ, 100 տոկոսով հրկիզուած է ռատի-

ոկայանը: Բայց 12 ժամ չէր անցած վերադարձաւ եթեր: Ան չէ ուզած սակայն յստակացնել, թէ որ վայրէն եւ ինչ սարգաւորումներով այժմ կը սփռուի ռատիոկայանը:

Արա Սիսերեան նաեւ հաստատած է Ընկ. ձէրէճեանի փոխանցած տեղեկութիւնը, որ յարձակումը կատարուած է շիա մահմետականներու «Հրգպալլա» կուսակցութեան գինեակներուն կողմէ:

«Այս նախապէս ծրագրուած յարձակում էր: Դէպքէն մի քանի ժամ առաջ մենք տեղեկութիւն ստացանք, որ գալու են եւ հրկիզելու ռատիոկայանը: Տեղեկութիւնը ստանալէն անմիջապէս ետք ես աշխատակիցներուն հրահանգեցի լքել ռատիոկայանի շէնքը: Երկու ժամ ետք եկան եւ ամբողջութեամբ հրկիզեցին կայանը», - պատմած է Արա Սիսերեան:

Միւս կողմէ հայկական երեք կուսակցութիւնները՝ ՍԴՀԿ, ՀՅԴ, եւ ՌԱԿ Լիբանանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն կապակցութեամբ հրատարակեցին հետեւեալ յայտարարութիւնը.

«Ուրբաթ, 9 Մայիս 2008-ին, Շաղգոյեան կեդրոնին մէջ հայկա-

Շաբ.ը էջ 4

ՀԵՆՏԻՆՔԵԱՆ ԱՍԱՄԲԼԻԱՆ ԱՅԱԶԱՆԳ ԿԸ ՀՆՉԵՑՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԵՋ ՏԻՐՈՂ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Հէլսինքեան քաղաքացիական ասամբլիայի վանաձորի գրասենեակը իր պատրաստակամութիւնը յայտնեց համագործակցելու եւրոպական կառույցների հետ «կասեցնելու Հայաստանում հակափորձը դավարական եւ հակաիրաւական համակարգի ձեւաւորման գործընթացը»:

ԵՆԽՎ-ի նախագահ Լուիս Մարիա Տէ Պոյչին ուղղուած նամակին մէջ կազմակերպութիւնը իր մտահոգութիւնը կը յայտնէ, որ հակառակ արդէն անցած է մէկ ամիս ԵՆԽՎ-ի բանաձեւի ընդունումէն, սակայն մինչ այժմ կը շարունակուին անազատութեան մէջ գտնուելի քաղաքական հայեացքներու համար ձերբակալուած քաղաքացիները:

«Իբր քրէական յանցագործութիւն կատարելու մէջ մեղադրուող քաղաքացիներին գործի նախաքննութիւնը կա'մ չի կատարուել, կա'մ իրականացուած է ակնյայտ ճնշումներով, կեղծիքներով եւ շինծու ապացոյցներով:

«Դատարանը քաղաքացիական հարկերին մեղաւոր է ճանաչում իշխանութիւնը բռնութեամբ գալութիւնը կամ զանգուածային միջոցառումներին մասնակցելու համար: Նրանց նկատմամբ կիրառուում են պայմանական պատիժներ, որոնք իրենց բնոյթով հանդիսանում են ապօրինի գործարք: Դրանք

իրենց բնոյթով հանդիսանում են գործարք ապօրինաբար մեղադրուող գոհի եւ անպատիժ դահիճի միջեւ: Զոհերը ազատութեան մէջ գտնուելու համար համաձայնուած են անհիմն մեղադրանքների հետ՝ տալով սուտ ցուցմունքներ թէ՛ իրենց, թէ՛ իրենց համախոհների դէմ, յայտնուելով վճարելով ծանր փրկագին» ըսուած է Հէլսինքեան ասամբլիայի նամակին մէջ:

«Մինչ այժմ էլ շարունակում են ապօրինաբար բերման ենթարկել, անյայտ ուղղութեամբ տանել եւ անազատութեան մէջ պահել քաղաքացիներին: Հրապարակային ամենափոքր ակտիվութիւնն ուղեկցում է ոստիկանական ուժերի հրապարակային ցուցադրմամբ, որն ուղղակի հանդիսանում է հոգեբանական ճնշում քաղաքացիների նկատմամբ: Կալանքների ժամկետները առանց որեւէ հիմքի, ապօրինաբար երկարաձգուած են դատարանների կողմից՝ շարունակելով անազատութեան մէջ պահել ընդդիմադիր գործիչներին եւ ակտիվիստներին»:

Ըստ Հէլսինքեան ասամբլիայի, Հայաստանի մէջ ստեղծուած իրավիճակը կրնայ միայն խոր մտահոգութիւն եւ հիասթափութիւն յառաջացնել մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ ժողովրդական ազատութիւններու առումով:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԳԼԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԵՌԱՐԼՈՒՐ

Մայիս 8-ին Հայաստանի մէջ նշուեցաւ Երկրապահի օրը եւ այս առթիւ Երաբլուր այցելեցին համաժողովրդական շարժման առաջնորդները՝ Լեւոն Տէր-Պետրոսեան, Արամ Սարգսեան, Ստեփան Դեմիրճեան, Լիւտմիլ Սարգսեան եւ այլ կուսակցութեանց ղեկավարները, ինչպէս նաեւ Երկրապահ Կամաւորական Միութեան, երիտասարդական եւ կանանց կազմակերպութիւններու անդամները:



Լեւոն Տէր-Պետրոսեան վարդեր կը գետնէ վազգէն Սարգսեանի շիրմաքարին

Համաժողովրդական շարժման մասնակիցները լուռ բարձրացան Սպարապետ Վազգէն Սարգսեանի շիրմի մօտ: Լեւոն Տէր-Պետրոսեան վարդազոյն վարդերու մեծ փունջ գետեղեց Վազգէն Սարգսեանի շիրմաքարին ու խոնարհեցաւ Գրետա եւ Զաւէն Սարգսեաններու առջեւ, շնորհակարտելով զանոնք քօսի առթիւ, որու ձեռքբերման մէջ մեծ եղած էր անոնց զակի՝ Վազգէն Սարգսեանի աւանդը:

Սպայի Տան մօտ տեղադրուած Վազգէն Սարգսեանի կիսանդրի մօտէն խումբ մը երիտասարդներ երթով, բռնուցքներով վեր պարզած, «Ազատ, անկախ Հայաստան» վանկարկումներով եկան Երաբլուր. «Մենք ոտքով գալով, յարգանքի տուրք մատուցեցինք մեր բոլոր զոհուած հայրենակիցներին, եւ մեր աջակցու-

Շաբ.ը էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՀԱՐՑԵՐ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՐԲԱՊՂԾՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏՆԵՐԻՆ

Զանազան գործիչներ, լրատուամիջոցներ, քաղաքագետներ հռետորակալան շեշտադրումով հարցնում են՝ որքանով էր բարոյական Ապրիլի 24-ին երթ կազմակերպել դեպի Ծիծեռնակաբերդ եւ երթի ընթացքում հնչեցնել ընդդիմութեան հանրահաւաքների կարգախօսները: Հարցի մէջ պարունակուող կշտամբանքը վերածուած է մահացու մեղադրանքի, երբ նրանք, վիրաւորուածի ու լիկուածի վշտահար դէմքերով ըմբոստանում են՝ ասելով. «Սրբապղծութիւն է գուգահեռ տանել 1915 թուականի ցեղասպանութեան եւ Մարտի 1-ի միջեւ»:

Կարելի էր եւ չպատասխանել մտաւոր այլասերուածութեան ստոյգ ցուցիչ հանդիսացող այս հարցերին, թոյլ տալով, որ դրանք մատնուեն մոռացութեան, ապաւինելով առողջ բանականութեանը, որը ջնջում է յիշողութիւնից անհեթեթութիւնները եւ պահպանում փաստը, իրողութիւնը, ոգին: Բայց, ցաւօք, հարուածի սլաքը ուղղուած է հենց առողջ բանականութեանը:

Հասկանալու համար, թէ որքանով էր բարոյական այդ երթը, որն իր մարդաշատութեամբ, կազմակերպուածութեամբ ու հզօրութեամբ ներդրումներ էր անում աշխարհում պահպանողներին ու մէկ էլ նրանց ազդեցութեան տակ իրենց փարախային անդորրը վայելողներին, հարկաւոր է նախ պատասխանել հետեւեալ հարցին. ինչպէ՞ս եղաւ, որ տեղի ունեցաւ այդ երթը: Աւելի պարզ՝ ինչո՞ւ տեղի ունեցաւ:

Եթէ քաջութիւն չունէք պատասխանը չնենգափոխելու, գոնէ քաջութիւն ունեցէք այդ պատասխանը լսել երթին մասնակցած ցանկացած քաղաքացուց, եւ նա ձեզ կը բացատրի, թէ ինչու էր, դիցուք, ինքը Ապրիլի 24-ին Ծիծեռ-

նակաբերդ գնում «Ազատութիւն» վանկարկելով: Որովհետեւ դուք սահմանափակել էք նրա ազատութիւնը, վտարել էք նրան Ազատութեան հրապարակից եւ կալանաւորել էք այդ հրապարակը: Կը բացատրի, թէ ինչու էր ինքը վեր պարզում բռունցքը: Որովհետեւ դուք բռնութիւն էք գործադրել խաղաղ ցուցարարների նկատմամբ, ծեծել էք մահակներով, ձերբակալել ու կալանաւորել էք անմեղ մարդկանց, որովհետեւ հայ զինուորները, հայ ոստիկանները կրակել են հայ ժողովրդի վրայ: Կը բացատրի, թէ ինչու էր ինքը վանկարկում «Լեւոն, նախագահ»: Որովհետեւ լիտիաբար գողացուել են Լեւոնի քուէները, կեղծուել են ընտրութիւնները: Կը բացատրի, թէ ինչու էր վանկարկում «Պայքար, պայքար մինչեւ վերջ»: Որովհետեւ չի հաշտուում անմեղ մարդկանց շինծու մեղադրանքներով բանտերում պահելը եւ դրան անյարիր ձեր սառնասիրտ երեսպաշտութիւնը, թէ բանտերում ձեր ընկերներն են. էլ ի՞նչ ընկեր էք, որ չէք պահանջում ազատ արձակել նրանց:

Թէ՞ արդէն համաձայն էք, որ նրանք յանցագործ են: Եթէ յանցագործ են, ինչո՞ւ էք հպարտանում, որ ձեր ընկերներն են, ի՞նչ մի հպարտանալու բան է յանցագործ ընկեր ունենալը: Եթէ յանցագործ չեն, նրանք ձեզ ի՞նչ ընկեր:

Երթին մասնակցած ՀՀ իւրաքանչիւր քաղաքացի ձեզինից իւրաքանչիւրին կը բացատրի, որ բարոյագրկութիւնը ոչ թէ համախմբուած, վճռական ու արժանապատիւ երթն է դէպի Ծիծեռնակաբերդ, այլ կեղծիք կատարելը եւ կեղծիքի վրայ աչք փակելը, բռնութիւն գործադրելը եւ պաշտպանուողին բռնութիւն գործադրելու մէջ մեղադրելը, մարդկանց կաշառելն ու

ահաբեկելը, հնազանդներին զօրով հրապարակներ բերելը եւ հնազանդուել չկամեցողներին հրապարակներից մահակներով քշելը, սպանդ կազմակերպելը եւ սպանդի գոհերի յիշատակը պղծելը...

Ասենք՝ դուք շատ աւելի լաւ գիտէք այս ամէնը, քան ձեզ կը բացատրի Ծիծեռնակաբերդի երթին մասնակցած քաղաքացին: Գիտէք, բայց չքմեղացած հարցնում էք՝ «որքանով էր բարոյական...»: Դուք հրաշալի գիտէք, որ ոչ ոք ոչ մէկին չի կարող պարտադրել ոտքով օպերայից քայլել մինչեւ Ծիծեռնակաբերդ, որ ոչ ոք չի սպառնացել՝ եթէ չքայլես՝ գործից կ'ազատեմ: Հետեւաբար, տասնեակ, հարիւր հազարաւոր մարդիկ դա արել են ինքնակամ, քաղաքացիական գիտակցութեամբ, դա եղել է ժողովրդի առողջ բնազդով՝ ընդդէմ ցեղասպանութեան, բռնութեան, անարդարութեան, ստորութեան, յանուն ազատութեան, արժանապատուութեան: Եւ դուք հարցնում էք՝ որքանով էր բարոյական: Դուք համարձակուում էք կասկածել ժողովրդի բարոյականութեանը: Դուք՝ ծառայամիտի, երեսպաշտի, այլասերուածի ձեր նկարագրով: Գիտակցուած, թէ՞ անգիտակցաբար ջուր լցնելով Մարտի 1-ի սպանդի կազմակերպիչներին, այդ սպանդն իրագործողներին եւ այն արդարացնողներին ջրաղացին:

Բայց դուք չէք բաւարարուում ձեր մթազնած ուղեղներով ժողովրդի բարոյականութեանը կասկածելով, ձեր ազրեսիվ անբարոյականութեամբ ժողովրդին բարոյագրկութեան մէջ մեղադրելով: Դուք աւելի հեռուն էք գնում եւ հրապարակում ձեր դատաւճիռը. «Սրբապղծութիւն էր Ապրիլի 24-ի ցեղասպանութիւնը նոյնացնել մարտի 1-ի դէպքերին»: Դուք չէք խորշում նենգափոխել փաստը. ոչ

ոք չի նոյնացրել դրանք: Ցուցապատաւոր, որ օրեր շարունակ չէր իջնում հեռուստատարիքների էկրաններից՝ ցուցադրուում էր որպէս յանցանշան, մատնացոյց էր անում Ապրիլի 24-ի եւ Մարտի 1-ի ոճրագործութիւնների գուգահեռը: Եթէ համարձակուէք ասել, թէ չկայ գուգահեռ, կը նշանակի խտրակալութիւն դնել անմեղ գոհերի միջեւ: Կը նշանակի ցաւ ապրել թուրքի ձեռքով սպանուածների համար, բայց ոչ մի զգացմունք չունենալ Մարտի 1-ին հայի ձեռքով սպանուածների հանդէպ: Ի՞նչ էք կարծում, սա՞ չէ սրբապղծութիւնը:

Այո, մէկուկէս միլիոնը շատ է, քան տասը: Ուղիղ 150 հազար անգամ: Կամ՝ մէկ միլիոն չորս հարիւր իննսուներեք հազար ինը հարիւր իննսուներեք թէ մէկուկէս միլիոն գոհ էր ձեզ պէտք Մարտի 1-ին, որ դատապարտէիք Մարտի 1-ը եւ «նոյնացնէիք» այն Ապրիլի 24-ի հետ: Մի՞թէ կշիռքի նժարին էք դնում անմեղ գոհերի արիւնը, որը թուրքիալուծ, նաեւ՝ Սոմաթլիթում հեղուեց ճիշդ նոյն ձեռագրով, ինչ Մարտի 1-ին՝ Երեւանում:

«Թէեւ հարցի կոնտեքստից փոքր-ինչ կտրուած կարող է դիտարկուել, բայց, օրինակ, երկխօսութեան յաջողուած դրսեւորում է Հայաստանի իշխանութիւնների հրապարակային դիրքորոշումը՝ առանց նախապայմանների թուրքիայի հետ երկխօսութիւն իրականացնելու մասին», - օրերս մի հարցազրոյցում յայտարարել է Արթուր Բաղդասարեանը: Եթէ առաջնորդուենք սրբապղծութեան կանխավարկածով, ապա Արթուր Բաղդասարեանը, անտարակոյս, խփել է տասին: Ճիշդ է՝ «կոնտեքստից

Շաբ.ք էջ 19

ԻՍԿ ՄԵՂԱԴՐՈՂՆԵ՞ՐՆ ՈՎԵՐ ԵՆ

Եթէ հաւատալու լինենք իշխանական քարոզչութեանը, Հայաստանում կայ հզօր քաղաքական ուժ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած համաժողովրդական շարժումը, որի միակ նպատակը Հայաստանը ներսից քայքայելն ու թուլացնելն է: Այս բացառապատասխանութեան հեղինակները, բնականաբար, չեն կարող պատասխանել այն հարցին, թէ ինչպէ՞ս է լինում, որ փոքրիկ մի երկրում 350 հազար (իրականում՝ անհամեմատ աւելի շատ) մարդ գնում է «երկիրը ներսից քայքայողների» հետեւից, իսկ իրենք՝ «պետականութեան մասին մտածողները», վախենում են քթները հանել իրենց կաբինետներից եւ նոյնիսկ ինչո՞ք են կազմակերպում թաքուն՝ գիշերը, գողեգող, հսկայական թիկնազօրով շրջապատուած:

Բայց ինչի՞րը նոյնիսկ սա չէ: Փաստօրէն, Հայաստանում իրավիճակն այսպիսին է. ժամանակ առ ժամանակ ռեժիմին ծառայող ինչ-որ դեմքեր յայտնուում են հեռուստակերպաններին կամ իշխանական թերթերի էջերում, արագ-արագ համաժողովրդական շարժմանը մեղադրում դաւաճանութեան մէջ ու «չունի խողով»՝ ծլկում՝ լափելու իրենց լափը: Ու որպէսզի սրանց առանձին-առանձին չանդրադարձնանք, կը գործենք Յակոբ Պարոնեանի «մեթոտով»: Հիշո՞ւմ էք, թէ

ինչպէս էր նա ներկայացնում «ագգային ջոջերին» ընդամէնը մէկ նախադասութեամբ. «Սգկիթ մը շինել տուած է»: Իսկ թէ ինչու յատկապէս «ջոջերին»՝ հասկանալի է: Ուշադիր նայէք, թէ ովքեր են այսօր Լեւոն Տէր-Պետրոսեանի դեկավարած շարժումն անուանում «դաւաճանական»: Ոչ մի շարքային քաղաքացի չկայ: Եւ առանց բացառութեան բոլորը անձնապէս շահագրգռուած են ռեժիմի հետադաջ գոյատեւմամբ: Եթէ չէք հաւատում՝ նմուշի համար ցոյց տուէք գոնէ մէկին, ով անձնական շահագրգռուածութիւն չունի, բայց հակալեւոնական քարոզչութեամբ է զբաղուած:

Սկսենք հենց Սերժ Սարգսեանից: Ի՞նչ կը լինի նրա վիճակը, եթէ համաժողովրդական շարժումը յաղթանակի: Առանց մանրամասների մէջ խորանալու նշենք միայն, որ իշխանութեան բռնազաւթումը (ոչ թէ բռնազաւթման փորձը) շատ ծանր քրէական յանցագործութիւն է: Սրան աւելացնենք նաեւ ընտրակեղծիքների կազմակերպումը, խաղաղ ցուցարարների վրայ կրակելը եւ այլն: Մի խօսքով՝ համաժողովրդական շարժման յաղթանակի դէպքում նա իր առանձնատանը հանգիստ ապրելու եւ գիրք գրելու շնան չի ունենայ: Տիրաւոր Սարգսեան: Իշխանափոխութիւնից յետոյ նա ստիպ-

ուած կը լինի երկար եւ մանրամասն ցուցմունքներ տալ այն մասին, թէ ինչպէ՞ս «արժեւորուեց» հայկական դրամը, դրա արդիւնքում քանի՞ միլիարդ դոլարի վնաս կրեց Հայաստանի Հանրապետութիւնը, որքա՞ն տուժեց ժողովուրդը եւ այլն: Բնականաբար, նա պիտի ատամներով պաշտպանի այս ռեժիմին:

Ալեքսան Յարութիւնեան: Կարծում ենք՝ նրա «անձնական շահագրգռուածութիւնը մեկնաբանել պէտք չէ: Փաստն այն է, որ նա համաժողովրդական շարժման դէմ պայքարում է ոչ թէ յանուն «պետական շահի», այլ յանուն սեփական ապագայի: Սա նրա համար բաւիս բուն իմաստով կենացմահու պայքար է:

Գալուստ Սահակեան: Այս մարդը, լինելով ՀՀ փոխնախագահ, երբ հիմնական նիւթական արժէք ունի. «մարշրուտկի գիծ», պաշտօնեալ որդի եւ տօնավաճառի տէր ինամի: Ակնյայտ է, որ իշխանափոխութիւնից յետոյ նա ՀՀ փոխնախագահի պաշտօնը կը պահպանի, բայց ոչ ինքը՝ «մարշրուտկի գիծ» կ'ունենայ, ոչ որդին՝ պաշտօն, ոչ ինամին՝ տօնավաճառ: Սա է ճշմարտութիւնը, եւ նրա արտասանած «պետականամէտ ճառերին» պէտք է նայել հենց այս տեսանկիւ-

Շաբ.ք էջ 19

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ՝ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՊԱՍՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝ ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ Գեղ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797- 6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՍՏ ՖՐԱՆՍԱԳՐԱՅ ՓԱՍՏԱԲԱՆԻ, ՄԻԱՅՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՑՈՒՑՍՈՒՆՔՆԵՐՆ ԱՊԱՑՈՅՑ ԼԻՆԵԼ ՉԵՆ ԿԱՐՈՂ

ԵՐԵՒԱՆ, ՆՈՅՆԱՆ ՏԱՊՈՒՆ: Ծրագրային աշխատանքներում էր գտնուում Ֆրանսիայի հայ փաստաբանների եւ իրաւաբանների միութիւնի փաստաբանների Ծրագրային խումբը, որը եկել էր յատկապէս ընտրութիւններին, եւ մասնաւորապէս, Մարտի 1-ի դէպքերի կապակցութեամբ հայաստանցի գործընկերներին աջակցելու նպատակով: Միութեան վարչական խորհրդի անդամ Ժերար Չոլակեանը «ՆՈՅՆԱՆ ՏԱՊՈՒՆ»-ի թղթակցին յայտնեց, որ իրենց տպաւորութեամբ լարուածութիւն է գգացում է փաստաբանների եւ արդարատուութեան մարմինների աշխատանքում. «Այս պահին մեզ թւում է, որ փաստաբաններին մերժուել է տեղեկ լինել գործի, քննչական վարոյթի մանրամասներին», - ասաց Ֆրանսիայի փաստաբանը: Նա նշեց նաեւ, որ իրենք «հիմնականում մտահոգուած են այս գործերի ընթացքում պաշտպանեալներին պաշտպանելիս փաստաբանների ունեցած բարոյութիւնների կապակցութեամբ»: Խումբը հանդիպել է տեղացի փաստաբաններին, որոշ կալանաւորուածներին, ու նաեւ արդարատուութեան նախարար Գէորգ Դանիէլեանի հետ: «Մենք գգում ենք, որ բաւականին

ուժեղ ճնշումներ են գործադրուում, չեն յարգուել դատավարական եւ քննութեան որոշ ընթացակարգեր: Կը կարողանայինք աւելի մանրամասն եւ կոնկրետ պատասխանել, եթէ կարողանայինք աւելի մանրամասն ծանօթանալ գործերին եւ նաեւ մասնակցել դատավարութիւններին»:

Ֆրանսիայի փաստաբանը այցի վերջին օրը ներկայ է գտնուել իշխանութեան ներկայացուցչի դէմ ոչ վտանգաւոր բռնութիւն գործադրելու մէջ մեղադրուող, նախկին ազատամարտիկ Խաչիկ Գասպարեանի գործով դատաքննութեանը: «Անհարին է մարդուն բանտարկել, եթէ չկան կոնկրետ ապացոյցներ նրա գործում», - ասաց Չոլակեանը, ընդգծելով, որ բոլոր երկրներում միայն ոստիկանների ցուցմունքը ապացոյց չի համարուում:

Նախատեսուում է, որ այցի արդիւնքների վերաբերեալ մինչեւ Մայիսի վերջ կազմակերպութեան կողմից կը պատրաստուի զեկոյց Պրն. Չոլակեանը չբացատրեց, որ Ֆրանսիայի փաստաբանները կը վերադառնան ոչ կառավարական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ՝ ներկայ գտնուելու դատավարութիւններին:

ԿԱՐԱՊԵՏ ՌՈՒԲԻՆԵԱՆ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՈՒԵԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՀՀ գլխաւոր դատախազի գրաւոր ցուցումով Մայիս 12-ին փոխուել է ԱԺ նախկին փոխխօսնակ, իշխանազաւթութեան փաստով յարուցուած քրէական գործով մեղադրուող Կարապետ Ռուբինեանի խափանման միջոցը՝ կալանքը փոխարինուել է հանրապետութիւնից չհեռանալու մասին ստորագրութեամբ: Տեղեկութիւնը հաստատեց ԳՀՀ գլխաւոր դատախազի խօսնակ Սոնա Տուզեանը:

Գլխաւոր դատախազի ցուցումը հիմնուած է նրա վրայ, որ Կարապետ Ռուբինեանի հետ քննչական անհրաժեշտ հիմնական գործողութիւնները կատարուած են, եւ նրան անազատութեան մէջ պահելն այլեւս նպատակայարմար չէ, բացի այդ, դատախազը համոզուած է, որ նա քննութիւնից չի թաքնուի եւ չի խոչընդոտի նախաքննական մարմնի գործունէութեանը:

Յիշեցնենք, որ Կարապետ Ռուբինեանը մի քանի անգամ մեկուսարանում հացադուլ է յայտարարել: Նրան մեղադրանք է առա-



Կարապետ Ռուբինեան

ջադրուել 300 յօդուածի առաջին մասով՝ պետական իշխանութիւնը իւրացնելու ուղղուած գործողութիւններ, եւ 225-րդ յօդուածի 3րդ մասով՝ սպանութեամբ գոլգորդուած զանգուածային անկարգութիւններ:

ՀԱՆՐԱՅԻՆԻ ԵԹԵՐՈՒՄ ԿԸ ԼԻՆԵՆ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԲԱՆԱՎԵՃԵՐ

Հանրային հեռուստառադիոընկերութեան խորհրդի նախագահ Ալեքսան Յարութիւնեան պատասխանեփլով «Ժառանգութեան» պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանի հարցին, թէ. «Ինչու են ազգային նկարագրին ոչ յարիւր շողերը Հանրայինի եթերում այդքան շատ, փոխարէնը, օրինակ, ընդդիմադիրներն ի սպառ վերացած են հանրայինի եթերից. ո՞վ է թող տուել, որ հանրային հեռուստաընկերութիւնը պետեիւջի միջոցներից անուկելով, ունենալով իր հիմքում մեր քաղաքացիների գումարները, որոնք ունեն սահմանադրական իրաւունք հաւասարակշռուած տեղեկատուութիւն ստանալու, չտրամադրի այդպիսի տեղեկատուութիւն», Ալեքսան Յարութիւնեանը պարզաբանեց, «Դրանք իսկապէս քիչ են եղել մեր եթերում», բայց խոստացաւ, որ նախատեսուող բարեփոխումները աստիճանաբար կը տեսնենք մեր աչքերով, իսկ սեպտեմբերից 50 տոկոսով քաղաքական հաղորդումների աճ կը նկատուի եւ գրեթէ ամենօրեայ բանավէճեր կը լինեն եւ նշուած բացը կը լացուի»:

Քաղաքական հաղորդումների եւ մասնաւորապէս ընդդիմութեանը եթեր հագումազէպ տրամադրելու վերաբերեալ Յարութիւնեան համաձայնեց:

«ԱԳՆ»-Ն ՊԱՅՔԱՐՈՒՄ Է ՈՉ ԹԵ ԱՐՏԱՔԻՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ, ԱՅԼ....»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՀՀ-ում յետընտրական գործընթացի վերաբերեալ Փետրուարի 24-ին յայտարարութեամբ իրենց մտահոգութիւնը արտայայտած եւ անմիջապէս աշխատանքից ազատուած, դիւանագիտական կոչումից զրկուած ԱԳՆ 10 աշխատակիցները մինչ օրս չզիտեն իրենց աշխատանքից ազատելու պատճառը: Նրանցից 4-ը՝ Վլադիմիր Կարապետեանը, Կարինէ Աֆրիկեանը, Մարթա Այվազեանը եւ Առաքել Սեմիջեանը, դիմել էին դատարան՝ բողոքելով իրենց աշխատանքից ազատելու դէմ:

Նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը յայտարարել էր, թէ դիւանագէտները խախտել են «Դիւանագիտական ծառայութեան մասին» ՀՀ օրէնքի 40-րդ եւ 44-րդ յօդուածները:

«Համաձայն այդ իրաւական նորմի՝ դիւանագէտը զբաղեցրած պաշտօնից ազատուում է, երբ իր ծառայողական դիրքը, աշխատանքային միջոցները օգտագործում է կուսակցութիւնների, շահերի եւ այլ քաղաքական կամ կրօնական գործունէութիւն իրականացնելու համար», - պարզաբանեց Վարչական դատարանի դիմած 4 դիւանագէտների փաստաբան Լեւոն Բաղդասարեանը:

Դիւանագէտներն իրենց յայտարարութեամբ ընդամէնը մտահոգութիւնն էին յայտնել յետընտրական զարգացումների առթիւ եւ կողմերին կոչ արել՝ զերծ մնալ ուժի



Աշխատանքից հեռացուած դիւանագէտներ մամլոյ ասուլիսի ընթացքին

կիրառումից, ընդ որում Մարտի 1-ի ողբերգութիւնից օրեր առաջ:

Վարչական դատարանում արդէն տեղի է ունեցել նախնական նիստը, որի ընթացքում պատասխանող կողմը որպէս դիւանագէտներին աշխատանքից հեռացնելու պատճառ ներկայացրել է միայն նրանց յայտարարութիւնը, որտեղ «Դիւանագիտական ծառայութեան» մասին օրէնքի 40-րդ եւ 44-րդ յօդուածների խախտման որեւէ տող կամ բառ չկայ:

Աշխատանքից հեռացուած դիւանագէտները իրենց ամբողջ գործունէութեան ընթացքում երբեք չեն արժանացել որեւէ նկատողութեան կամ պատժի:

Դատարանի դիմած դիւանագէտները «Ա1+»-ին յայտնեցին, որ Մարտի 1-ից յետոյ, երբ հաստատուեց, որ նրանց նախագրուական յայտարարութիւնը տեղին էր, ԱԳՆ-ից որեւէ մէկը փորձ չի արել նրանց հետ կապուել:

ԵՐԵՒԱՆԻ ՓԱՐԻՉԵԱՆ ՍՐՃԱՐԱՆԸ ԿԸ ՓԱԿՈՒԻ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Արեւելեան փողոցի վրայ գտնուող Փարիզեան սրճարանը փակուում է: Սրճարանի տիրուհին՝ Վալերի Գործունեանը ստիպուած է փակել այս սրճարանը, որը համարուում էր Սփիւռքի ու Հայաստանի համագործակցութեան յաջող օրինակ, Հայաստանում ֆրանսիական ներդրումների խորհրդանիշ: 13 տարի Հայաստանում գործունէութիւն ծաւալող Վալերի Գործունեանը բաց նամակ է ուղարկել շատ տիւր բովանդակութեամբ:

«Այսօր, ես տիւր եմ: Տասներեք տարի առաջ, ես որոշեցի թողնել Ֆրանսիան, իմ երկրորդ հայրենիքն ու տեղափոխուել Հայաստան՝ հայրենիքում ներդրում անելու նպատակով՝ ստեղծելով «Փարիզեան սրճարանը»: Ես ներդրեցի իմ ժամանակ, էներգիան, առողջութիւնն ու գումարները, որպէսզի Արեւելեան փողոցի վրայ լուսաւորուի փարիզեան փոքրիկ սրճարանը, որ եղել է գործարար, ընկերական ու հանգստի հանդիպումների վայր: Սակայն այնպէս է ստացուել, որ փոքրիկ երազանքս ինձ համար վերածուել է անվերջանալի մղձաւանջի: Չանդրադառնալով իմ անձնական խնդիրներին, ուզում եմ պարզապէս նշել, որ իմ, թերեւս ոչ տեղին, մարդահաւատութեան պատճառով, ես պարտք տուեցի մի մարդու, ով իբր չէր կարողանում, բայց իրականում հրաժարուում էր այն ինձ վերադարձնել, իսկ երբ իմ մեծահոգութիւնն ինձ ստիպեց, որ այդ մարդուն ներգրաւել իմ բիզնեսում, ես հասկացայ, որ նա պարբերաբար թաւանում է ինձ՝ իրեն հաւատարիմ



Վալերի Գործունեան

դարձրած որոշ ծառայողների հետ, որոնք իրենց հովանաւորի պէս դարձել են մէկը միւսից կողմնապացուած: Կարող եք ասել, որ սովորական պատմութիւն է, որին հնարաւոր է ամէն տեղ հանդիպել: Բայց ամէն տեղ գործում է ժայռի նման ամուր արդարադատութիւնը, որ պաշտպանում է մարդու իրաւունքներն ու հետաքրքրութիւնները: Արդարադատութիւնն ու դատարանը նրա համար է, որ բռնի գողի ձեռքը... սակայն դա այդպէս է ամենուր, բացի իմ սիրելի Հայաստանից, որտեղ արդարադատութիւնը կողմնապացուած է ոսկորներից ու արմատից, որտեղ այն բանակցում է մեղաւորի հետ, որտեղ այն թոյլից վերցնում է ունեցուածքը, որ բաժանի ուժեղի հետ, որտեղ այն ճշմարտութիւնից աւելի փողն է նախընտրում: Սա է իմ տիրութեան պատճառը, տիւր եմ, որ իմ ու ձեր սրտերի համար թանկ Հայաստանը դարձրուած է գործելուց, տիւր եմ, որովհետեւ այսպէս շարունակուելու դէպքում ես ստիպուած եմ փակել Փարիզեան սրճարանն ու վերադառնալ Ֆրանսիա», - ասում է Վալերի Գործունեանը բաց նամակում:

ԼՈՒՐԵՐ

«ԼՂՀ-Ն ՈՐՊԵՍ ՄԻԱԴՈՐ ԱՅՍՕՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Հարկաւոր է անել ամէն ինչ որպէսզի ԼՂՀ-ն անպայման դառնայ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման շուրջ բանակցութիւններու մասնակից», - այս կարծիքին է նախկին արտգործնախարար Վահան Փափագեանը, որը պաշտօնավորել է 1993-1996 թթ-ին: Այլ կերպ, ըստ նրա, համաձայնութեան հասնել հնարաւոր չէ: «Շատ պարզ տրամաբանութիւն է, եթէ որոշուած է ԼՂՀ ժողովրդի ապագան, ապա այն որպէս կողմ պիտի մասնակցի: Եւ այն, որ այսօր գործընթացը յայտնուել է զգալի փակուղում՝ պայմանաւորուած է հենց դրանով», - ասաց նա:

Ըստ նրա, հայկական կողմը նկատելիօրէն զիջել է իր դիրքերը բոլոր պարամետրերում եւ ինչու չէ՞ կորցրել նաեւ հեղինակութիւնը: «Այն էս տեսակէտից մենք վերջին մի քանի տարիներին նկատելիօրէն զիջել ենք, ինչը Պաքոսին թոյլ է տալիս լինել համարձակ, աւելի ճիշդ բնորոշեմ՝ լկտի: Դա արտայայտուեց յատկապէս իր տարածքային ամբողջականութեան վերաբերեալ ՄԱԿ-ում բանաձեւի ընդունման ժամանակ»:

Դիւանագէտի խօսքով, եթէ մենք ուզում ենք հասնել դիւանագիտական լուծման, ապա ԼՂՀ-ն առաջին հերթին պէտք է ընդգրկուի բանակցութիւններում, իսկ Հայաստանը փորձի վերականգնել հեղինակութիւնը: «ՄԱԿ-ում ընդունուած բանաձեւը անկասկած կ'անդրադառնայ դիւանագիտական պրոցէսի վրայ, իսկ դրա շնորհիւ Ատրպէյճանը միջնորդներին անընդհատ ասելու է, որ սա է հիմքը: Մենք պէտք է փորձենք վերականգնել մեր դիւանագիտական, քաղաքական, ինչու չէ նաեւ տնտեսական հեղինակութիւնը:

Առանց դրա ես այսօր հարցի լուծում չեմ տեսնում», - ասում է նախկին դիւանագէտը: Նա նաեւ կարծում է, որ Մարտի 1-ի հասարակական հետաքննարկումները երբեք չեն լուծուի, քանի որ Ատրպէյճանը դրանք չի ընդունելու: «Հայաստանը որպէս պետութիւն իրաւունք չունի ԼՂՀ-ին ստիպել ընդունել այս կամ այն փաստաթուղթը, Ղարաբաղը ինքը պիտի բանակցի եւ պիտի գտնուի համաձայնեցուած լուծում Հայաստանի, ԼՂՀի եւ Ատրպէյճանի միջեւ: Այլ ճանապարհ չկայ»:

Վերջերս նորանշանակ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը, անդրադառնալով բանակցային գործընթացին, «հանրաքուէ» բառի փոխարէն օգտագործել էր «պլեբեսցիտ» տերմինը: Նախկին արտգործնախարարը այդ բառերի միջեւ սկզբունքային տարբերութիւն է տեսնում:

«Այն, որ նոր արտգործնախարարը օգտագործում է այդ բառը, լեզուի առթիւ ասելով չէ: Փաստաթղթում այդպէս էլ գրուած է. հանրաքուէ կամ պլեբեսցիտ: Պլեբեսցիտ կոչուած է ընդամենը հարցում այն մասին, թէ ինչ կարգավիճակ է ուզում տուեալ ժողովուրդը, իսկ հանրաքուէի դէպքում Ատրպէյճանը պէտք է նախապէս յայտարարի, որ ընդունելու է դրա արդիւնքները: Պլեբեսցիտի դէպքում դա անհրաժեշտ չէ: Բացի այդ, ինչպէս էլ այն կոչեն, ես կարծում եմ, որ դա երբեք չի անցկացուի, քանի որ Ատրպէյճանը չի ընդունի ինքնորոշման ճանապարհով կարգավիճակի ճշգրտման տարբերակը: Խնդիրը բառերի մէջ չէ, այլ նրանում որ ԼՂՀ-ն որպէս միակողմանի պայտք գոյութիւն չունի: Սա է պրոբլեմը», - ասաց Վահան Փափագեանը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐԺԵԼ ԵՆ ՅԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ ԲԱՅԵԼՈՒ ԴԻՄՈՒՍԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայ-թուրքական գործարար ընկերակցութիւնը, «Թըրքիշ Տէլիֆոնիկ» թերթի փոխանցմամբ, յայտնել է, որ մերժուել է իրենց դիմումը Իսթանպուլում ընկերակցութեան գրասենեակը բացելու խնդրանքով:

Թուրքիայի համապատասխան մարմիններին դիմումը անցեալ տարուայ մայիսին ներկայացրել էր Հայ-թուրքական գործարար զարգացման խորհուրդը, որի գրասենեակը գտնուում է Բրիւսելում: Դիմումը մերժել է Բրիւսելի ներքին գործերի նախարարութիւնը այս տարուայ Փետրուարին:

Քահան Սոյակը՝ այդ խորհրդի համանախագահը, հաստատել է, որ կազմակերպութեան չորս անդամներ, այդ թւում եւ ինքը,

անցած Մայիսին դիմել էին գրասենեակ բացելու համար:

«Մենք ինն ամիս արձագանք չէինք ստացել», - թուրքական թերթին ասել է Սոյակը: - «Փետրուարին Իսթանպուլի նահանգապետի գրասենեակը նամակ ուղարկեց, որով մերժում է մեր խնդրանքը՝ առանց որեւէ պատճառաբանութեան»:

Նրա խօսքերով, մինչեւ Փետրուար խորհրդի հայ եւ թուրք անդամները տպաւորութիւն ունէին, որ ներքին գործերի նախարարութիւնը կը թոյլատրի գրասենեակի բացումը, որովհետեւ անցած նոյեմբերին ԱՄՆ-Թուրքիա կլոր սեղանի ժամանակ թուրք դիւանագէտները փոխանցել էին կառավարութեան մտադրութիւնը, որ թոյլատրելու են գրասենեակի բացումը:

ՓՈԹՈՐ ՍԵՆՆԵՊԻ

Շարունակուած էջ 1-էն

արտակարգ դրութեան ընթացքին: Խօսքը, մասնաւորապէս, ցոյցերու ու հաւաքներու ազատութեան մասին է, ինչպէս նաեւ ազատ արձակուածը այն մարդոց, որոնք բանտարկուեցան իրենց քաղաքական գործունէութեան համար: Կան խնդիրներ, որոնք աւելի շատ գործընթացի մաս կը կազմեն, օրի-

նակ՝ երկխօսութիւնը իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ կամ Մարտի 1-ի իրադարձութիւններու հետաքննութիւնը: Մեր տեսակէտը հետեւեալն է՝ աւելի լաւ է այս ամէնը աւելի շուտ անել»:

Սեմնեպի շայտնած է, որ ԵՆԽՎ-ի բանաձեւի կատարման շուրջ բաւական երկարատեւ քննարկումներ ունեցած է թէ՛ Հայաստանի իշխանութիւններու, թէ՛ ընդ-

ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ՆԱԽԱԶՆԵԼ ԳԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հայաստանի քաղաքագէտների միութիւնը պատրաստուած է նախաձեռնել հասարակական լսումներ, որոնք կարող են վերածուել Մարտի 1-ի հասարակական հետաքննութեան, որովհետեւ, ըստ քաղաքագէտների միութեան նախագահ Համեակ Յովհաննիսեանի, միայն հասարակական հետաքննութիւնը կարող է լինել մեր պայմաններում անաչառ եւ անկախ: Նա վստահում է կամ միջազգային հետաքննութեանը, կամ հասարակական: «Այդ լսումների ընթացքում, չուսով ենք, կ'ունենանք այնպիսի առատ նիւթեր եւ վկայութիւններ մեր քաղաքացիների կողմից, որ հնարաւորութիւն կ'ունենաք հասարակական լսումները վերածել հասարակական հետաքննութեան, ինչի արդիւնքներով Հաագայի դատարան դիմելու իմ առաջարկը կը ստանայ միա ու արիւն եւ կեանքի կը կոչուի հասարակութեան համընդհանուր ուժերով»:

Յիշեցնենք, որ համաժողովրդական շարժման ուժերի երկրորդ կոնգրեսի ժամանակ Համայնակ Յովհաննիսեանը հնչեցրեց Հաագայի դատարան դիմելու գաղափարը: «Ես առաջարկեցի, բայց դա իրականացի է միմիայն այն դէպքում, երբ կոնգրեսին անդամակցող բոլոր քաղաքական, հասարակական գործիչները ձեռնամուխ լինեն այդ գործին: Դա մեծածաւալ աշխատանք է, որը պահանջում է համապատասխան ներուժի առկայութիւն, որը հնարաւոր է միայն կոնգրեսի ձեւաւորումից յետոյ»:

Համայնակ Յովհաննիսեանը լիայոյս է, որ երբ կոնգրեսի կառուցները ձեւաւորուեն, միաձայն համապատասխան որոշում կը կայացուի պաշտպանելու իր նախաձեռնութիւնը, այն է հաւաքել ստորագրութիւններ, ի պաշտպանութիւն այն հացից, որը պէտք է նախօրօք մշակուի եւ ստորագրութիւններով ամրապնդուած ուղարկուի Հաագայի դատարան:

Իսկ ինչ վերաբերում է ստեղծուած եւ ստեղծուելիք յանձնաժողովներին ու աշխատանքային խմբերին, որոնք պէտք է ուսումնասիրեն նախագահի ընտրութիւնների ընթացքում տեղ գտած խախտումները կամ ԵՆԽՎ բանաձեւի իրականացման ընթացքին հետեւեն, ապա



Քաղաքագետների միութեան նախագահ Համեակ Յովհաննիսեան

Համայնակ Յովհաննիսեանը նկատում է. «Իշխանութիւնները վաղուց են հմտացել ամենաճիշդ եւ ամենահիմնաւորուած գաղափարները ապականելու, թաղելու գործում»:

Իսկ ՀՀ իշխանութիւնների լեգիտիմութեան վերականգման միակ մեխանիզմը համարում է ոչ թէ տարբեր յանձնաժողովների աշխատանքով աչքակապուելիւնը, այլ համապետական արտահերթ ընտրութիւնները, յատկապէս նախագահի եւ ԱԺ-ի:

«Այլ տարբերակ լեգիտիմութեան վերականգման գոյութիւն չունի: Մի ԱԺ, որը չկարողացաւ ստանձնել արբիտրի դերը նախագահական ընտրութիւնների ընթացքում, չկարողացաւ կանխել Մարտի 1-ի ողբերգութիւնը, չնայած այդ հնարաւորութիւնը ունէր, որովհետեւ եթէ ընդդիմադիր առաջնորդները Միասնիկեանի արձանի մօտ հանգստացնուած եւ զսպում էին ժողովրդին, ցուցարարներին, եւ եթէ նոյնը անէին ԱԺ-ի պատգամաւորները, եթէ 131 անդամով ներկայ գտնուէին եւ զսպէին, որպէսզի չկրակէին այդ «իրաւապահ» կոչուածները, ամէն մէկը մէկի ձեռքը բռնէր, սթափութեան կոչէին դիպուկահարներին եւ միւսներին, ովքեր կրակում էին ժողովրդի վրայ, այդ ողբերգութիւնը տեղի չէր ունենայ եւ հնարաւոր կը լինէր խուսափել: Ինչպէս նրանք, այնպէս էլ Գարեգին Երկրորդը պարտաւոր էին լինել այդ ժամին այնտեղ եւ կանխել արիւնահեղութիւնը»:

ՈԱՏԻՕ ՍԵՒԱՆԻ ԶՐԿԻԶՈՒՄԸ

Շարունակուած էջ 1-էն

կան երեք կուսակցութիւններու՝ Ս.Դ.Հ.Կ., Հ.Յ.Դ., Ռ.Ա.Կ.-ի պատասխանատու մարմինները, երկրին վերջին իրադարձութիւններու լոյսին տակ, անգամ մը եւս հանդիպեցան, քննարկելու երկիրը եւ գաղութը մտահոգող վիճակը:

Վերջին շրջանին քաղաքական երկխօսութեան բացակայութիւնը, որուն յաջորդող ապահովական համատարած խախտումներու երեւոյթները, լիբանանեան բո-

լոր քաղաքական ուժերուն կը պարտաւորեցնեն Լիբանանի գերագոյն շահերը նկատի ունենալով, փոխադարձ հասկացողութեամբ, լուրջ ու արդիւնաւէտ երկխօսութեան նախաձեռնել, վերականգնելու համար Լիբանանը յատկանշող ազգային միասնականութիւնը:

Երեք կուսակցութիւնները կը հաւատան, որ ինչպէս անցեալին, այնպէս ալ այսօր, լիբանանցիները պիտի յաղթահարեն այս դժուարին հանգրուանը ու վերադարձնեն լիբանանեան հայրենիքը իր նախկին փառքին:

դիմութեան ներկայացուցիչներու հետ:

«Ես մի քանի անգամ խօսած եմ նոր նախագահի հետ՝ թէ՛ մինչեւ անոր երդման արարողութիւնը, թէ՛ անկէ յետոյ: Ան ինծի հաւաստիացուցած է, որ կը զբաղի այդ խնդիրներով: Հակառակ ասոր, ես

որեւէ պատրանք չունիմ, որ կրնան ըլլալ մարդիկ, ուժեր կամ կառուցներ, որ այլ կարծիք կ'ունենան: Կը մնայ սպասել եւ տեսնել՝ բարձրացուած խնդիրները կը լուծուի՞ն, թէ՞ ոչ», - աւելցուցած է Փիթեր Սեմնեպի:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՅԳԱԲԱՅԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՄԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ

Իր ամենէն հարագատ իմաստով ու պարզագոյն բնորոշմամբ, գերազանցապէս ժողովուրդի լայն զանգուածներն են որ կ'առաջնորդեն Հայաստանի ներկայ ընդդիմութեան համաքաղաքացիական շարժումը: Այս շարժման քաղաքական-կազմակերպչական ղեկավարները, առանց բացառութեան, իրենց ուժն ու հեղինակութիւնը ըստ էութեան կը ստանան ժողովուրդի առաջնորդութեան ակունքէն - ակունք, ուր գիրար կ'ողջագուրեն՝ գործօն մասնակցութեամբ պայքարի իջած երիտասարդն ու երէց սերունդը, աշխատաւորն ու պաշտօնեան, կուսակցականն ու անկուսակցականը, մտաւորականն ու լրագրողը, քաղաքացին ու գիւղացին, երկրապահն ու ազատամարտիկը: Բազմաճարտիւր հագարներ, այսինքն ոչ թէ բնակչութեան սահմանափակ որոշ հատուած մը, այլ ամբողջ ժողովուրդի գործօն, պայքարող, ապագան կանխորոշող մեծամասնութիւնը:

Հետեւաբար, ընդդիմութեան համաժողովրդական ազգային շարժումը, ամէն բանէ առաջ եւ վեր, կոչուած է ծառայելու ժողովուրդի - ամբողջ ժողովուրդի - կենսական պահանջներուն, շահերուն, բարօրութեան, արժանապատուութեան, ազատութեան, երազներուն: Արժանավայել կեանքին: Հայաստանի ժողովուրդը շահած է ատոր արդար իրաւունքը՝ իր երկար ու թէժ պայքարներուն, զրկանքներուն, զոհաբերութեան ու զոհերուն գինով:

Երկրին մէջ վերջին ամիսներու ընկերային արիւնալի մարտերով ծնունդ առած քաղաքացիական հասարակութեան կեանքը տնօրինող իրաւական հիմքը, այսուհետեւ, նոյնինքն ժողովուրդն է իր բազմապիսի կարիքներով ու պահանջներով: Ասկէ աւելի բարձր ու նուիրական գոյապատճառ կամ առաջադրանք չկայ երկրի պետական ամբողջ համակարգին համար:

Հայաստան հողի վրայ այլեւս սանձարձակ տիրապետութեան, բռնատիրական իշխանութեան եւ ինքնակոչ քմայածին գերակաշխութեան իրաւունք չունի որեւէ մակարդակի հեղինակութիւն որ ինքզինք աւելի վեր նկատէ, կամ հռչակէ, քան երկրի քաղաքացիական հասարակութիւնը, այսինքն ժողովուրդը - ո՛չ Ազգային ժողովը, ո՛չ կառավարութիւնը, ո՛չ դատական

համակարգը, ո՛չ Սահմանադրական Դատարանը, ո՛չ հանրապետութեան նախագահը: Եւ ոչ ալ հասարակական որեւէ զարտուղի խաւ կամ խմբակ, ինչպիսին են հարստապետները կամ մաֆիան: Նորագոյն դառն փորձը ապացուցեց թէ այս բոլորն ալ, իրենց զուտ սեփական նեղ շահերուն դրդումով, որոշ պայմաններու եւ հանգամանքներու առկայութեամբ կարող են շեղիլ հայրենիքի գերագոյն շահերու ճիշդ ուղիէն: Անոնք երբեմն նոյնիսկ հակամէտ են դաւաճանելու հայրենիքի եւ ամբողջ ժողովուրդի անվտանգութեան, եւ իրենց յոռեգոյն արարքները արդարացնել փորձելու՝ հոգեբանական ամենէն խղճալի խեղկատակութիւններով ու տրամաբանական ամենէն ձախաւեր խեղաթիւրումներով: Փաստ՝ Փետրուար 1999-ի, Մարտ 1-ի եւ առհասարակ վերջին քանի մը ամիսներու սպանութիւնները, բանտարկութիւնները, դատավարութիւն կոչուած ոճրահատիտութիւնները, մարդու իրաւունքներու անխնայ ոտնակոխումը:

Հայ քաղաքացին անպաշտպան մնաց իր երկրին մէջ որուն անբաժան մէկ մասը եղող Արցախի անկախութեան համար իր կեանքն էր զոհած դեռ երկու տասնամեակներ առաջ: Նոյնինքն Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը իրենց անկախութեան եւ ազատութեան համար պարտական են Արցախի, Հայաստանի եւ Սփիւռքի անձնուրաց ազատամարտիկներու զոհաբերութեան: Սակայն այս երկուքը ֆաշիստական ամենէն վայրագ մեթոտներով փոխադարձեցին՝ բռնաբարելով հայ ժողովուրդի անբասիր հերոսներու արժանապատուութիւնը: Գաւառային-աւազակային զարհուրելի անբարոյութեամբ ու ոճրային սառնասրտութեամբ անոնք արհամարհեցին եւ արիւնով խեղդեցին քաղաքացիներու ազատութեան տարրական իրաւունքները: Մանրակրկիտ կերպով նախաձրագրուած ու նախապատրաստուած գինեալ մարդասպան ոճմակներու անխնայ շղթայագերծովով կոտորեցին անպաշտպան քաղաքացիները, օրինաւոր խաղող միջոցներով իր քաղաքական կամքն արտայայտող հիւնալի՛ ժողովուրդը: Սահմանադրութիւնն ու մարդու արժանապատուութիւնը անարգող իրենց ոճրային արարքներով ա՛յն աստիճան վտանգեցին երկրի կայունութիւնն ու պետականութեան հիմքերը որ շատ դիւրու-



թեամբ կրնայինք կորսնցնել այն ինչ որ գերմարդկային զոհողութիւններով ձեռք բերուած էր վերջին 17 տարիներուն:

Այսուհանդերձ, այս ծանր փորձութիւններուն մէջ իսկ ժողովուրդը արթնացած էր իր երկարատեւ խոր թմբիրէն - եւ արթուն կը հետեւէր իրադարձութիւններուն՝ թոյլ չտալով որ վտանգուի հայրենիքի ապահովութիւնը: Օրինակելի կարգապահութեամբ եւ ինքնագիտակցութեամբ, ան իր ճակատագրին դեկը վերջապէս առաւ իր սեփական ձեռքերուն մէջ: Եւ ինք էր այն միջոց ուժը որ իր քաղաքական-կազմակերպչական ղեկավարները օժտեց սկզբունքային քաջարի կեցուածքով ու քաղաքական հաստատ կամքով:

Որպէսզի դառնայ իր երկրի ճակատագրին որոշիչ ուժը, արթնացած ժողովուրդին համար բացարձակ նախապայման է մնալ միշտ արթուն: Պայման է որ ան մնայուն կերպով տէր կանգնի իր արդար իրաւունքներուն եւ զանոնք առանց պայմանի միանգամընդմիշտ չյանձնէ օրուայ իշխանութիւններուն - որոնք որ ալ ըլլան այդ իշխանութիւնները, ո՛վ որ ալ կանգնած ըլլայ անոնց գլուխը: Իր կողմէ այսպիսի անդուլ վերահսկողութիւնը այն գինն է որ ժողովուրդը պարտի վճարել՝ եթէ կ'ուզէ երաշխաւորել այդ իրաւունքներու երկարժամկէտ ապահովումը: Եւ եթէ կ'ուզէ թոյլ չտալ որ զանոնք գողնալով իր ձեռքէն յափշտակեն՝ այդ նպատակով գողտագողի սպասող աւազակներն ու աւազակապետները: Անգամ մը որ անհրա-

ժեշտ միջոցներով անդառնալիօրէն ապահովէ իր իրաւունքները, հայրենի երկրի իրաւատէր ժողովուրդը կը դառնայ անոր շրջահայեաց ու հասուն իսկական տէրը: Այլեւս ան պէտք է ունենար - թէեւ միշտ ալ պէտք է ունեցած - այդ աւազակներուն որ թալանեն գինք ու ցեխին մէջ իրեն իր մարդկային տարրական արժանապատուութիւնը:

Ո՛չ՝ մենաշնորհներուն: Ո՛չ՝ հարստապետական համակարգի մը որ հիմնուած ըլլայ անբարոյական մենաշնորհներու եւ իշխանութեան ընձեռած անօրինական եւ անարդար հովանաւորութեան վրայ:

Թող ամէն քաղաքացի ազատօրէն դրսևորէ իր ստեղծագործական լաւագոյն տաղանդներու անկաշկանդ ծաղկումը - սակայն որեւէ իմաստակ կիսազրգազտ կամ փողոցային մեծբերան չհամարձակի քաղաքական բրտութեամբ ու տնտեսական բռնութեամբ աքլորանալ ժողովուրդին վրայ, դժբախտացնել գայն, մղձաւանջի վերածել անոր արժանավայել կեանքը:

Թող ամէն մարդ իր ընդունակութիւններուն համազօր ճարտարութեամբ ներդրումը կատարէ հարագատ երկրի բարգաւաճման ու հզօրացման: Եւ իւրաքանչիւրը արդար հատուցումն ստանայ՝ իր մտային ու ֆիզիքական հայրենաշէն աշխատանքին համար:

Կ'ուզեմ աներկբայօրէն յստակացնել առաջադրանքս: Այստեղ իմ ջատագովածս ընկերակալութիւնը չէ, ժողովրդավարական-ընկերակալական իրաւակարգը չէ: Դեռ կանուխ է նման իրական կարելիութեան համար: Ամբողջ աշխարհի, տարածաշրջանի եւ Հայաստանի քաղաքական ընթացքի ներկայ հանգրուանին, անիրապաշտ եւ անպատասխանատու քայլ մը պիտի ըլլար նման առաջադրանքի իրագործման փորձը: Ես ճշմարիտ ժողովրդավարութիւնն է որ կը ջատագովեմ - բաց ժողովրդավարութեան համակարգ մը որ ծառայէ ժողովուրդի բարօրութեան նպատակներուն, եւ որ քօղարկուած խաբեբայութիւն մը չըլլայ որ հապէս կը սատարէ հարստապետութեան հակաժողովրդական ուժերուն:

Դաժան, արիւնալի պայքարներու գինով քաղաքական-քաղաքացիական իր զարթոնքը իրագործած ժողովուրդին համար ընդունելի նուազագոյն լուծման ուղին է ասիկա:

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ!

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS BELLENA AND THE SAHALAH DANCERS

authentic cuisine
full hookah bar
VIP membership
full cocktail bar
live belly dancing
live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB
626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱ ԵՐԵՒՈՅԹԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

Ամերիկեան նախագահական ընտրութեանց հետեւող իրազեւ ղր-տողներէն մեծամասնութիւնը կը նախատեսեն որ Տեմոքրատ կուսակցութեան թեկնածու կը նշանակուի քննիացի, սեւ ցեղի պատկանող, եւ ամերիկացի, սպիտակ ցեղի պատկանող, իսառնածին Պարաք Օպամա, եւ նախատեսուած թուականն ալ կը կարծուի Մայիս 20ը, երբ կը վերջանայ նախնական ճանչցուած մնացեալ ընտրութիւնները (primaries), որոշ նահանգներու մէջ, վերջինը Օրեկոն նահանգն է: Ինք, Օպամա եւս, արդէն ինքզինք կը ներկայացնէ իբրեւ թեկնածու, հակառակ այն իրողութեան որ իր միակ մրցակիցը, Հիլըրի Գլինթըն, տակաւին կը շարունակէ իր ընթացքը, նոյնիսկ յայտարարելով որ ընտրապայքարը տակաւին չէ վերջացած: Տեմոքրատ կուսակցութեան պատկանող «իմաստուններ» ինչպիսիք են նախկին նախագահութեան թեկնածու, 84-ամեայ ձորձ Մքլովըրն, եւ բազմաթիւ տեմոքրատիկներ կը թեւադրեն Հիլըրիին, իր թեկնածութիւնը քաշել ի նպաստ Օպամայի, եւ միացնելով կուսակցութեան շարքերը, պատրաստուիլ Հանրապետական ձօն Մքքէյնի դէմ պայքարելու: Այնքան ատեն որ տեմոքրատները կը շարունակեն բաժնուած մնալ, հանրապետականները առիթը կ'ունենան աւելի լաւ կազմակերպուելու եւ իրենց մարտավարութիւնը (strategy) ճշդելու: Արդէն իսկ ներկայիս ակնատես կ'ըլլանք Օպամա-Մքքէյն երկուստեք «սլաքներ»-ու, որոնք տակաւին «անմեղ» կը թուին, եւ սակայն երբ ընդհանուր ընտրութիւնները մօտենան, կրնան աւելի «արիւ» եւ «ազդու» դառնալ: Մինչ Օպամա կը սպասէ իր նշանակման, բազմաթիւ գեր-պատուիրակներ Հիլըրիին շրջադարձ կ'ընեն եւ կը միանան



Օպամայի ճակատին: Երբ վերջերս Օպամա կ'այցելէր Ուաշինկթըն Գոնկրէսէն ներս, հոն եւս կը ստանար շնորհաւորութիւններ, ինչպէս նաեւ նոր կողմնակիցներու ցանկ մը:

Տեմոքրատ կուսակցութիւնը նոյնպէս ունի կնճռոտ հարց մը, որ կը վերաբերի Միչիկըն եւ Ֆլորիտա նահանգներու ընտրական կացութեան: Այս երկու նահանգները իսառնածին կուսակցութեան որոշած եւ ընդունած օրէնքները ընտրութեանց ընթացքին վերաբերեալ, եւ արտօնեալ ժամկէտէն առաջ կազմակերպեցին ընտրութիւններ, որոնց ներկայիս վաւերականութիւնը ինդրոյ առարկայ է: Սկզբնական ամիսներուն, Հիլըրի Գլինթըն ընդունած էր նախատեսուած օրէնքները, եւ ենթարկուելու պատրաստակամութիւն յայտնած, եւ սակայն ան, նեղի մնացած ըլլալը զգալով, եւ այդ երկու նահանգներէն ներս յաղթանակ տանելու յոյսով, կ'առաջարկէ եւ կը պնդէ որ կրկին անգամ ընտրութիւններ կազմակերպուին այդ երկուքէն ներս, եւ անոնց ներկայացուցիչները մասնակցին Օգոստոսին, Տէնսիքի մէջ, գումարուելիք ընդհանուր համագումարին: Այս հարցը տակաւին չէ լուծուած, եւ սակայն, կուսակցութիւնը այլ եւս

չի կրնար երկար սպասել, եւ վերջնական լուծում մը կու տայ այս հարցին, որպէսզի ընտրութեանց ներկայանայ միացեալ ճակատով, եւ յաղթելու ակնկալութեամբ: Կ'ըսուի նաեւ թէ, եթէ Հիլըրին քաշուի, եւ կամ թեկնածու նշանակուի Պարաք Օպաման, Հիլըրիի կողմնակիցնր ձեռնպահ կրնան մնալ, նոյնիսկ քուէարկել ձօն Մքքէյնին:

ԻՆՉՈՐԻ ԱՅՍ ՀԱՐՅԸ Կ'ԱՐԾԱՐՈՒԻ ԱՅՍՕՐ

Պարզ իրականութիւնը, որ ցարդ չէր արտայայտուած, այն է որ Օպամայի եւ Գլինթընի ընտրողական մասնակիցները, կամ խումբերը տարբեր ցեղային, ընկերային եւ տարիքային խումբերու կը պատկանին:

Օպամա, իր ցեղային պատկանելիութեան պատճառաւ, կը վայելէ սեւ, աֆրօ-ամերիկեան զանգուածներու մեծամասնութեան անվերապահ օժանդակութիւնը, նոյնիսկ 90 եւ աւելի համեմատութեամբ: Պատմական նկատմամբ, թէեւ ասկէ առաջ նախագահութեան թեկնածուներ եղած են, ինչպէս ձեւի ձեւքսըն, կամ էլ Շարփթըն, եւ սակայն ասոնցմէ որեւէ մէկը այսքան յաջող թեկնածու չէ եղած: Օպաման շատ խելացի, ճարպիկ եւ պերճախօս թեկնածու մը եղած է, եւ հակառակ իր ունեցած վերջին շրջանի դժուարութեանց – վեր. ձեռքմի Պրայթի ելոյթները, իր մտերմութիւնը անոր եւ անոր պատկանող եկեղեցւոյ հետ, Սան Ֆրանսիսքոյի մէջ իր մէկ «ճախաւեր» յայտարարութեան, կարգ մը ընտրողներու ընտրական ընթացքին շուրջ, իր կնոջ, Միչելի կարգ մը ելոյթներուն, եւ մասնաւորաբար ահաբեկիչ նկատուած անձի մը հետ իր երկարատեւ գործակցութեան, ուրեմն հակառակ այն դժուարութեանց, որոնք կրնան զինք հալածել

ընդհանուր ընտրութեան ժամանակ, Օպամա իր վերջին ելոյթներուն ընթացքին, կրցաւ յստակացնել իր ցեղային պատկանելիութեան հարցը, բաւական պերճախօս եւ համոզիչ ելոյթով մը, վեր. ձ. Րայթի ասուպային, ժխտական արտայայտութիւններէն ետք: Փաստօրէն, «North Carolina»-ի ընտրութեան յաջողութեան լոյսին տակ, այնպէս կը թուի թէ արդէն իսկ մոռցուած են վեր. Պրայթի խօսքերը եւ միւս դժուարութիւնները, եւ այդ յաղթանակին յաջորդող ելոյթը հրաշալի կերպով կը ներկայացնէ իր քաղաքական տեսադաշտը եւ աշխարհաընկալումը: Իր ցեղային պատկանելիութիւնը, թէեւ ոմանց համար, ժխտական կրնայ թուիլ (liability) եւ սակայն, շատ մտածողներու համար, մանաւանդ սպիտակ ցեղայիններու համար, Օպամայի ի նպաստ կեցուածք մը հոգեբանական դրական փոփոխութիւն մը կը նկատուի, անցեալի «մեղքերը» քաւելու տեսակէտէն (asset): Անկախ այս բոլորէն, ոչ միայն սեւերու մօտ, այլ մանաւանդ երիտասարդ, համալսարանականներու մօտ, ինչպէս նաեւ սպիտակ արական քուէարկողներու մօտ, Օպամա կը վայելէ որոշ ժողովրդականութիւն:

Մէկ խօսքով իր անձնական արժանիքներու պատճառաւ, որոնք անվիճելի են, եւ որոշապէս համակրանքի առարկայ, ինչպէս նաեւ ընկերային, քաղաքական, պատմական եւ հոգեբանական նկատուածներով, որոնց վստահաբար կ'աւելնան նաեւ Պուշի իշխանութեան անցնող 8 տարիներու ճախաւերութիւնները, բոլորին ծանօթ, ներքին եւ արտաքին մարզերէն ներս, Պարաք Օպաման կը դարձնեն «ընտրելի» թեկնածու մը, երկրի նախագահութեան, եթէ անակնկալ, կոպիտ սայթաքում մը չպատահի...

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄ

ԳԵՐՇ. Տ. ՅՈՎԱՆ ԱՐԶ. ՏԵՐՏԵՆԱՆ ԱՌԱՋՆՈՐ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ՊԻՏԻ ՇՆՈՐՀԷ

ԲՐՇՆ. ՎԱՀԷ ՄԿ. ԱՐԴԵԱՆԻ ԵՒ ԲՐՇՆ. ՄԱՅՍ ՄԿ. ՇԱՀԱՋԵԱՆԻ

Տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Մայիս 29, 2008ին Երեկոյեան ժամը 6.30ին Հոյվուտի Աբ. Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ մէջ

Եկեղեցւոյ Հասցէն 1201 North Vine St., Hollywood Հեռ. (323) 465-9008

Արարողութենէն ետք՝ Հիւրասիրութիւն Մուրփի նուէր՝ \$ 100

Տեղի ապահովելու համար հեռաձայնել Եկեղեցւոյ Հոգեւոր Հոյի՝ Տէր Մանուկին (818) 429-9843

ԲԱՅԱՍՏԱՆԵՍՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄ

ՅՈՒՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀՈՎԱՆԱԻՌՈՒԹԵԱՄԲ

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԵՐԵԱՆԻ

ՆՈՒԻՐՈՒՄ՝

«ՇԻՐԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՆՆԷՍԵԱՆԻ

ԾՆՆԴԵԱՆ 80 ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ 55 ԱՄԵԱԿԻՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Հ.Բ.Մ. ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԹԷԲԷՅԱՆ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԵՐԻ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ԿԵՐՍ ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 22, 2008 ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:30

3325 N. GLENOAKS BLVD., BURBANK, CA 91504

ՄՈՒՏԲԸ ԱՋԱՏ Է, ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻԱՅ ԵԿԵՂԱՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ 81ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թեմական Պատգամաւորական 81րդ ժողովին մուտքի արձանագրութիւնը սկսաւ Ուրբաթ, Մայիս 2ի առաւօտեան ժամը 9:00ին: Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի բացման Աղօթքէն ետք, ներկաները միաբերան երգեցին «Սուրբ Աստուած»ը, ապա Հոգւ. Տ. Պարեոս Մ. Վրդ. Երէցեան Հայերէնով եւ Անգլերէնով Աւետարանական ընթերցում կատարեց, ուր Քրիստոս կը պատուիրէր, որ սիրենք իրար:

Ատենապետ՝ Էտրիլըն Գրիգորեան յայտարարեց, որ օրինական

նագրութիւնը: Ատենապետի հրաւերով, Քահանայութեան Թեկնածու՝ Բրշ. Արսէն Սրկ. Հայրապետեան կարդաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին պատգամը: Պատգամաւորները յոսնկայս եւ ամենայն երկիւղածութեամբ ունկնդրեցին Վեհափառ Հայրապետին քաջալերական պատգամը:

Նորին Սրբութեան պատգամին Անգլերէն թարգմանութիւնը կարդաց Քահանայութեան Թեկնածու՝ Բրշ. Գրիգոր Սրկ. Աւագեան: Օրուան Հոգեւոր Պատգամը



Թեմական 81րդ Պատգամաւորական ժողովի մասնակիցները

մեծամասնութիւնը գոյացած էր աւելի քան հարիւր պատգամաւորներէն:

Ժողովին Դիւանը Սրբազան Հօր Նախագահութեամբ կը բաղկանար հետեւեալներէ.-

Իրաւաբանուհի Էտրիլըն Գրիգորեան՝ Ատենապետ, ճերլոյտ Չուլճեան՝ Փոխ Ատենապետ, Զարուհի Տէր Մկրտիչեան՝ Ատենադպրուհի Անգլերէնի եւ Արժ. Տ. Սիփան Աւագ Քհնյ. Միսեան՝ Ատենադպիր Հայերէնի:

Ատենապետուհի Էտրիլըն Գրիգորեանի բարի գալստեան խօսքին մէջ այս ժողովը պատմական նկատեց, որովհետեւ Շաբաթ, Մայիս 3ի կէսօրուան մօտ Մայր Եկեղեցւոյ կառուցման պաշտօնական եւ գործնական աշխատանքները պիտի սկսէին: Ատենապետուհին գնահատեց նաեւ Պատգամաւորական ժողովի Հիւրընկալ Յանձնախումբին կատարած սքանչելի աշխատանքը:

Օրակարգի որդեգրումէն եւ յանձնախումբներու նշանակումէն ետք, Պատգամաւորները վաւերացուցին նախորդ տարուան՝ 80րդ Թեմական Պատգամաւորական ժողովին Ատե-

տուաւ Արժ. Տ. Շնորհք Աւագ Քհնյ. Տէմիրճեան:

Ապա Պատգամաւորները հանգամանօրէն նկատի առին հետեւեալ տեղեկագիրները, որոնք արդէն իսկ տպուած էին ժողովի գրքոյկին մէջ.-

Հայոց քաղաքամայրը Սեպտեմբերեան ցնծութենէն ետք սգոյ զգեստներ հագած էր: Ամէն տեղ լաց ու կոծ, տխուր դէմքեր պետական «Լէչ Քամիսիա» հիւանդանոցին մօտ հսկայ բազմութիւն, ուր բերած էին թուրքի վիժուածք, Նաչիւրի Յունանեանի ու երիցս անիծեալ ոճրագործ գործակիցներու զոհերը: Միւս օր, Հայաստանի օփերայի եւ Պալէստին թատրոնի բեմահարթակին վրայ դրուած էին Վազգէն Սարգսեանի, Կարէն Տէմիրճեանի, Լիոնարդ Պետրոսեանի, Եուրի Բաշիեանի եւ միւս նահատակներուն դագաղները: Իսկ յուղարկաւորութեան օրը, հարիւր-հազարաւոր սգակիր ժողովուրդը, դէպի Պանթէոն ու Եռաբլուր ճանապարհին կը գոռար. «Կեղոտութեամբ, եկար բոլորին գլուխը կերար, Ղարաբաղի ոճրագործ արիւնախումբ...» թերեւս անհատալի իր առաջին տպաւորութեամբ՝ որ նոյնինքն Ռոպերթ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը, ռուսական հետախուզութեան հետ եւ «Ալֆա»ի ու Ալեքսան Յարութիւնեանի մեղսակցութեամբ, Տիգ-

րան Նաղդալեանի «տեխնիկական սրբազրութեան, որպէս Հ1-ի տնօրէն» գլխաւոր դեր խաղացած են այս նախճիրին մէջ: Սակայն յետագայ իրադարձութիւնները, ոճրագործութեան շարունակութիւնը, այս հայրասպանութիւնը կոծկելու «դարաբաղեան կլան»ի ու «հայաստանցի» մեղսակիցներուն փորձերը, անուամբ անիծեալ Նաչիւրի Յունանեանի դատաւարութեան ձգձգումը՝ փաստեցին թէ իրօք, Ռ. Քոչարեան-Ս. Սարգսեան, Ա Յարութիւնեան եւ Եուրի է որ գլխաւոր դեր խաղացած է արդի Հայաստանը գլխատելու մէջ՝ ու շրջակայ մեծ տէրութիւնները, ընդգրկելով նաեւ «Մեծ Եղբայր» Ռուսաստանը՝ չեն ցանկանար հօգոր եւ անկախ Հայաստանի մը գոյութիւնը: Լաւ հայր, Հայաստանը, իրենց համար մեռած հայն ու հայրենիքն էր, «աշխարհագրական անուն» Հայաստանը, ինչպէս «պատմական Հայաստան», «Հայկական Լեւոնաշղթայ», «Թորոսի Լեւներ», «Լեւոնի ամրոց», եւ այլն:

Թերեւս դիւրահատութեամբ մօտենայինք այս վերոյիշեալ փաստերուն, սակայն մինչեւ 2007ի Հոկտեմբեր 26-ը այդ երկրորդ պատմական անկիւնադարձային օրը Հայաստանի արդի պատմութեան մէջ, տեղի ունեցած նախագահական ընտրութիւններու կեղծիքները, «անյայտ» մնացած սպաննութիւնները, դաւերն ու ոճիրները՝ ցոյց տուին թէ

Հայաստան իսկապէս կ'ապրի «մափիւր» աւագակապետական հասարակարգի օրեր, ինչպէս էր պատմականը ճառին մէջ յայտարարեց Հայաստանի Առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան: Հոկտեմբեր 27-ի նախճիրին տարելիցին նուիրուած ոգեկոչման հսկայ հաւաք-ցուցի օրը, Ազատութեան Հրապարակին վրայ բիւրաւոր մասնակիցներու հետ սկիզբ դրուեցաւ ազատութեան շարժման՝ որն փորձուեցաւ կասեցուիլ 2008 թուի Մարտ 1-ի չտեսնուած դաժանութեամբ, Ազատութեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ու Պէյրութի փողոցներու, Միասնիկեանի յաւերժ նայուածքներու տակ:

Ապա, անվերջ ձերբակալութիւններ, ապրիլեան-եղեռնեան դաժանութիւններ, 1973 թուի նման մտաւորականներու, ուղեղներու, հայրենասէրներու վերացում, փաստօրէն հայրենիքի եւ հայ ժողովուրդի իսկական դաւաճաններու «աշխոյժ» ու «չուտափոյժ» քայլեր, հայթափ ընելու Մայր Հայրենիքը:

Սակայն եւ այնպէս, հայ ժողովուրդը որ իր պատմութեան մէջ միշտ ալ հարուածուած է թիկունքէն, վարձկան հայրենադաւերու կողմէ՝ իր մէջ ուժ եւ կորով գտած է հասնելու լիակատար յաղթանակի, այս անգամ ալ Մինչեւ Վերջ, ի փառս մեր բիւրաւոր հին ու նոր նահատակներու, նորակերտ Մայր Հայրենիքի:



Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
• Individual and Family Plans
• Plans for Small Businesses
• Dental Coverage
• Medicare Supplement Plans
• Life Insurance by BC Life & Health Insurance Company
• HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
• Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

HARUT DER-TAVITIAN

Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDALE, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270



Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

ԲԱՑՈՒԱԾ Է
Հիպնոսարուժութեան կեդրոն
ղեկավարութեամբ՝
Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի
Փաստափնայի մէջ
Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ կ.ե. ժամը 3:00
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104
Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ
«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.
- Մարմնային ֆրոնիկ հիւանդութիւններ, արեան գերննշում, շաքարախտ, ազմա, եւ այլն:
- Մոլութիւններ - սիկարէթ, ալոլ, թմրադեղեր, եւ այլն:
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անհունութիւն, եւ այլն:
- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէգ, եղունգի կրծում, եւ այլն:
- Ուսումնական եւ սրորթային բարելաւում

ՎԱՍԵՐԳ

ՅԱՍՄԻԿ ՊԱՊԵԱՆ՝ ՎԱՍԱՇԽԱՐՎԱՅԻՆ ԱՍՏՂԸ

ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆ

Բոլոր արուեստներուն հիմը զգացումն է, միտքը, յուզումը, մարդկային հոգեկան աշխարհը: Երգը, թերեւ բոլոր արուեստներէն ամենամիջականն է, ձեռով ամենապարզը, վարակիչն ու մատչելին եւ շատ աւելի արագ կը թափանցէ հոգիներու մէջ, քան միւս արուեստներէն որեւէ մէկը:

Կիրակի, Ապրիլ 27-ի երեկոյեան «Vibiana» սրահին մէջ, միջազգային արժէք ունեցող երգչուհի Յասմիկ Պապեան կու գար Վիեննայէն բեռնաւորուած տարիներու համբաւով եւ փորձառութիւններով: Անհամբեր էինք զինք տեսնելու եւ լսելու: Դաշնակի վրայ կ'ընկերակցէր դարձեալ Վիեննայէն ծանօթ դաշնակահար Աւօ Գուլմանը:

Առաջին վարկեանէն զիս խորհրդածութիւններու եւ մտորումներու մէջ թաղեց, ակամայ փոխադրուեցայ Մայր Հայրենիք, զգացի աչքերուս տամկանալը: Սքանչացած եւ յուզուած ըմբոշիւնեցի հրաշալի երգչուհիին բարձր արուեստը:

Ստեղծագործ արուեստագէտի մը եւ կամ կատարողի մը տաղանդի չափանիշը կարելի է հասկնալ, արուեստի գործի մը հասկացողութենէն, հարազատ մեկնաբանութենէն եւ իր ապրումները փոխանցելու կարողութենէն, որոնք կը ստեղծեն մթնոլորտ մը, պատճառելով գեղարուեստական գոհացում մը:

Կ'ըսուի թէ մենահամերգները կորսնցուցած են իրենց հմայքը եւ ժամանակավրէպ են այլեւս: Բայց, երբ «Prima Donna» մը կը զրաւէ բեմը, ապշեցուցիչ փոփոխութիւններ կրնայ պատահիլ, մանաւանդ Յասմիկ Պապեանի նման «Diva» մը, որ գիտէ ունկնդիրները մագնիսացնել եւ սրտերը ջերմացնել:

Շնորհալի երգչուհին առաջին վարկեանէն երբ թեթեւ քայլերով եւ համակրելի ժպիտով բեմ ելաւ խոնարհութիւն ըրաւ, «անհրապոյր» սրահին մթնոլորտը ելեքտրականացաւ, սրահը ողողուեցաւ ծափողջոյններով:

Պապեանի յաջողութեան գաղտնիքը նախ եւ առաջ առողջ, բարձր արժանիքներով ախորժա-


լուր լիրկոյ-տրամադիք սօբրանօ ձայնն է, զօրաւոր անհատականութիւնն ու կատարեալ երաժշտականութիւնը եւ աշխատասիրութիւնը: Հրաշալի մարզուած է ձայնը, բոլոր հնչամասերը հաւասար, ներդաշնակ են: Բարձր ձայները յստակ ու շոյող, նոյնքան հարուստ ու փայլուն ցած ձայները: Շնորհիւ լաւ թէքնիքին, ձայնը բազմատեսակ նրբերանգներով հնչեցնելու կարողութիւնը ունի: Կրնայ այնքան մեղմ երգել, որ հագիւ ձայնը կը լսուի, միեւնոյն ժամանակ այնքան զօրաւոր՝ սրահը լեցնելու աստիճան տէմպրի գեղեցկութիւնը պահելով: Արուեստագէտ երգչուհի է, ունի զգայուն սիրտ, հաղորդելու շնորհք, գեղեցիկ արտաքինը, սլացիկ հասակը, բեմականութիւնը, իր «Պէլ Գանթօ» երգեցողութեան փայլքը կ'աւելցնեն:

Յասմիկ Պապեան ներկայացաւ որպէս Օփերայի երգչուհի: Յայտագիրը ամբողջութեամբ հարուստ սիրուած օփերայի դերերգներով էր պատրաստած համակրելի երգչուհին, որոնք հնարաւորութիւն տուին լիովին ներկայացնելու իր արտիստական խառնուածքի արժանիքները: Տողանցեցին երկու մասերու ընթացքին, դասական եւ ռոմանթիկ երաժիշտներ՝ Հէնսել (1685), Մոցարթ (1756), Տոնիցեթի Ռոսինի (1792), Վերտի (1813), Փուչինի (1858), Քաթալանի եւ Ա. Տիգրանեան (1879): Բոլորն ալ դժուար, խառն հոգեվիճակով, խաբուած սիրոյ, տխուր յուսալքուած կերպ էին, որոնք վիպական, մերթ ընդ մերթ քաղցր թէ կրքոտ շունչով մը տրուեցաւ: Դրսեւորելով զօրաւոր անհատականութիւնը կատարեալ թէքնիքը եւ զգայնութիւնը:

Հէնսելի «Alcina» օփերայէն «Ah, mio cor» առաջին երգէն իսկ թովչանքով պարուրեց ունկնդիրը, երգելով քնարական ճկունութեամբ: Հակառակ ծանր ու դժուար երգերուն, ոչ մէկ յոգնութիւն ցոյց տուաւ, ընդհակառակը, իւրաքանչիւրին մէջ գերազանցեց ինքզինքը, ձայնի յստակ ու պայծառ երանգներով եւ տպաւորիչ մեկնաբանութեամբ:

Վերտիի feonora-ի տրամադիք, դժբախտ ճակատագրէն հա-

լածուած աղջկայ «խաղաղութեան աղերսով», իրականացաւ առաւելապէս զգայուն իր խառնուածքին վերջին ծայր հաղորդական ոճը: Արեւ կայ Յասմիկի արուեստին մէջ: Նոյնքան ցնցող եւ ազդու էր Puccini-ի «Vissi D'arte» թօսքայի աղօթքը: Սկսաւ մեղմ, զուսպ, հրաշալիօրէն հասաւ տառապանքի պոթկուծի գազաթնակէտին, թափանցելով մեր սրտերէն ներս: Սիրեցինք Puccini-ի սիրուած «Madam Butterfly»-ը գողտրիկ, «O Mio Babbino» եւ «Ha Roudine» Magda-ի



զգայուն սիրերգերը: Հրաշալի էին մեղմ (piano) սահուն երգը, կարծես երկինքէն կու գար: Համերգը վերջացուց Անուշի «Ասում են Ուռին» (Տիգրանեան) թախծոտ երգով ուր Սարոյճն յուսալքուած գլուխը կախ չորցած Ուռենիի նման կու լայ:

Անկասկած զգայուն արուեստագէտ է, կ'ապրի, ստեղծելով անկեղծ եւ անմիջական կերպար: Սքանչելի մեկնաբանութիւններով մեր առջեւ բացաւ հերոսութիւններուն փոթորկուն ներաշխարհը:

Ժողովուրդին ոգեւորութեան տեղի տալով երգեց երեք երգեր եւս, այնքան յոգնութեան վերջ: «Կիլիկեա»ն, Կանաչեանի «Օրօրը», Կոմիտասի «Կաքաւիկ»: Անկասկած ամէն զնահատանքի արժանի է Աւօ Գուլմանի դաշնակի ընկերակցութիւնը: Իր խորաթափանց, զուսպ, հնչիւնի եւ ոճի կատարեալ ըմբռնողութիւնը, ամբողջ յայտագրին ընթացքին գերադասելի էին: Իսկապէս գեղարուեստական էր Աւօյին նուագը եւ

infiniteՀԻՅԳ
An Evening of Opera
Hasmik Papian & Avo Kuyumjian
at the Vibiana
August 27, 2008

մեծապէս նպաստեց երգչուհիին յաջողութեանը: (Նուագախումբի դերը կատարեց):

Բարձրորակ մենահամերգ էր, բայց ախտս որ շատ անյարմար սրահ մըն էր երգահանդէսի մը համար, մանաւանդ այսպիսի Diva-ի մը:

Հարիւրաւոր երաժշտասէրներ աւելի գոհ պիտի ըլլային եւ կատարեալ պիտի ըմբոշին էին այսպիսի արժէքաւոր արուեստագէտներու բարձր արուեստը, եթէ ունենային աւելի խնամուած յայտագիր մը երգերուն բացատրութիւններով: Ընդունուած սովորութիւն է բոլոր միջազգային բարձրորակ համերգներուն գոհացնել ունկնդիրները: Չէ որ հաճոյքի հետ դասախարակչական ալ է արուեստը: Սրահի արձանագանգը... չոր, անհանգիստ, նեղ շարուած աթոռներ... տոմսերու գիրներուն չէր պատշաճէր: Բարեբախտաբար Յասմիկին հմայքը քողարկեց բոլոր նեղութիւնները:

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՏՈՂՈՐԷՍ ԶՕՀՐԱՊ ԼԻՊՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
JP MORGAN CHASE BANK, TRUSTEE

Հանոյփով կը հաղորդեմք, թէ Տոլորէս Զօհրայ Լիպման Հիմնադրամը նիւթապէս պիտի օժանդակէ որ հատարակուի ընտրեալ

ա. վարդապետական աւարտանոցի հայագիտական նիւթերու մասին,
բ. հայոց հին պատմութեան երկեր հայ պատմաբաններու,
գ. 19րդ դարու եւ աւելի վաղ շրջանի հայ գրականութեան երկեր:

Ներկայացուող աշխատասիրութիւնները կրնան ըլլալ կա՛մ հայերէն կա՛մ անգլերէն լեզուով: Եթէ գործ մը հայերէն լեզուով է, անոր պէտք է ընկերանայ անգլերէն որակաւոր թարգմանութիւնը:

Դիմումնագիրները ներկայացնել ամէն տարուան Ապրիլ 15 եւ Նոյեմբեր 15 թուականներէն առաջ:

Յաւելուածական տեղեկութեան եւ դիմումնագրի թերթիկ ստանալու համար դիմել.

LEBMANN FUND _ PUBLICATIONS
c/o Mr. M. Haigents
1515 11th Street
Fort Lee, NJ 07024

Հայ Ինֆուքեան Հունձի
Armenian Identity Harvest
Վիքթորի Հանրապարտիսին Մէջ
At Victory Park

Եկէ՛ք ու Յայտնաբերեցէ՛ք Ձեր Ինքնութիւնը
Come and Discover Your Identity!

Կիրակի, Յունիս 1, 2008
Sunday, June 1, 2008

Food - մայ
Youth Activities - երիտասարդաց
Motorsports - Մեքենական ֆեմանիսի ցոյց
Games - Խաղեր
Arts and Crafts - Չեռային աշխատանք
Live Music - Երաժշտութիւն

Victory Park
2575 Paloma St.
Pasadena, CA 91107
1 PM - 8 PM

For more information call:
626•399•1799

Մուսքը Ապար

Ինքնութեան սկիզբը
Աստուծոյ երկնայէն է

ՏՈՒՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ԱՅՆԹԱՊԻ ՇԵՐՈՍԱՄԱՐՏԻ 88-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ ՏՈՒՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱԿՈՒՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ապրիլ 26, 2008, երեկոյան ժամը 7:00ին, Փասատինայի ՀԲԸ Միութեան, «Պոյաճեան» սրահին մէջ տեղի կ'ունենար այնթապցիներու հերոսամարտի 88-րդ տարելիցի տօնակատարութիւնը:

Յիշատակութեան արժանի, սովորութիւն դարձած Այնթապի հերոսամարտի տարեկան տօնակատարութիւնները, վառ կը պահեն յիշատակը այն հերոսներուն որոնք պայքարեցան Այնթապի հայ ժողովուրդի ազատագրման համար, զոհեր զոհեցան:

Րամանօրէն կը ներկայացնէր Այնթապի հերոսամարտի նախօրեակը, հայ ժողովուրդին ապրելակերպը Այնթապի մէջ, տնտեսական նախանձելի դիրքը, որ հաւանաբար պատճառ դարձաւ թուրքին շահագրգռութեան, հայ ժողովուրդի ուսումի կեդրոնները, եկեղեցիները իրենց տարբեր յարանուանութիւններով եւ ապա՝ գոյամարտը:

Այնթապի ինքնապաշտպանութեան հերոսները որոնցմէ շատեր զոհուեցան յանուն հայրենիքի պաշտպանութեան եւ այլ հերոսներ որոնք հեռաւոր Ամերիկայէն փութացին



Տիկ. Աստղիկ Ապառնեան-Խաննեան կը պարգևատրուի Միութեան գնահատանքի շքանշանով

իրենց կեանքը յանուն հայութեան: Միութեան ատենապետ՝ Պրն. Աւետիս Տէմիրճեան բարի գալուստ մաղթելով եւ շնորհակալութիւն յայտնելով ողջունեց ներկաները: Ապա սկսաւ ճաշի սպասարկութիւնը վերապատուելի Պարգեւ Տարագճեանի աղօթքէն ետք:

Ճաշէն ետք, օրուան հանդիսավար՝ պրն. Յարութիւն Կարապետեան ներկայացուց յայտագրի գեղարուեստական բաժնի Լարք Երաժշտական Միութեան կանանց երգչա-

Այնթապի հայ ժողովուրդի պաշտպանութեան, ինչպէս՝ Ատուր Լեւոնեան, կատարեցին իրենց սրբազան գործը ամենայն քաջութեամբ եւ ստոյգ կոտորածէ փրկեցին Այնթապի հայ ժողովուրդին մեծ մասնիկը:

Այնթապի բնակչութեան որոշ մէկ մասը, ջարդէն կարողացած էր ազատիլ եւ ապաստանիլ Հալէպ, վերակազմելով ընտանիք, աշխատանք, կրթական եւ մշակութային հաստատութիւններ, սատարելով հայ ազգի փրկութեան եւ յարատեւման:



Այնթապի Հայրենակցական Միութեան վարչական կազմը եւ Պրն. Երուանդ Պապայեան

խումբը, ղեկավարութեամբ խմբավար Վաչէ Պարսումեանի, որոնք ներկայացուցին հայկական գեղեցիկ երգերու հաւաքածոյ մը, իսկ՝ Տիկ. Թագուհի Արզումանեան կատարեց ասմունք մը, որմէ ետք պրն. Կարապետեան եւս կատարեց ասմունք մը:

Օրուան գլխաւոր բանախօսն էր պրն. Թորոս Թորանեան, սակայն անհանգստութեան պատճառով ան չէր կարողացած Հալէպէն դուրս ճամբորդել, ուստի՝ իր խօսքը որպէս գրութիւն կարդաց պրն. Գէորգ Քէօզկէրեանը: Պրն. Թորանեան ման-

Պրն. Թորանեան կը նշէր այն հայ կրթական մշակները որոնք կերտեցին եւ վառ պահեցին այնթապցիներու հաստատութիւնները աշխարհի տարածքին: Հաստատութիւններ կամ կազմակերպութիւններ որոնք ծիլ աւին Այնթապէն, Հալէպէն եւ Լիբանանէն, մինչեւ հեռաւոր Ամերիկան եւ մայր հայրենիքը եւ մինչեւ այսօր կը շարունակեն իրենց նուիրեալ ազգասպանման գործը, յանուն հայութեան, ինչպէս՝ «Հալէպի Կրթա-

Շաբ.ը էջ 17

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»Ը 30 ՏԱՐԵԿԱՆ

«Նոր Կեանք» շաբաթաթերթի 30-ամեակի տպաւորիչ հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, Ապրիլ 17, երեկոյան ժամը 7:30ին, Հ.Բ.Ը.Մ.ի Փասատինայի Ալեք Մանուկեան Կեդրոնի «Պոյաճեան» սրահին մէջ: Մեր պաշտօնակից «Նոր Կեանք», անկախ շաբաթաթերթի հիմնադրութեան 30-ամեակի սոյն ձեռնարկը իրենց ներկայութեամբ կը յարգէին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք., Գերշ. Վաչէ Արք., եւ այլ հոգեւորականներ, ինչպէս նաեւ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, եւ բազմաթիւ մտաւորական եւ գրասէր ընտրանի հասարակութիւն մը:

Ամերիկայի եւ Հայաստանի օրհներգներու յոտնկայս ունկնդրութենէն ետք, դաշնակի վրայ կատարողութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի, օրուայ հանդիսավար Armenian Observer թերթի խմբագիր Օշին Քէշիշեան դիպուկ նշումներ կատարեց ընհանրապէս հայ մամուլի, բայց մանաւանդ «Նոր Կեանք» շաբաթաթերթի մասին, եւ ընթացք տուաւ ճոխ եւ տեսակաւոր յայտագրի մը, որուն մասնակիցները բոլորն ալ, հակիրճ եւ շնորհաւորական խօսքեր արտասանեցին, յանձին թերթի խմբագիր եւ անոր գործակից տիկնոջ հասցէին, Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արշօ Շէնեաններու: Այսպէս, ելոյթներ ունեցան Տիկ. Սեսիլ Քէշիշեան, Ֆրանսայէն յատկապէս այս առթիւ Լոս Անճելըս գտնուող Տօքթ. Յակոբ Գրգեաշարեան, որ իր խօսքին կցեց իր գլխաւորած «Արարատ» Ակադեմիայի պատուոյ անդամի յանձնումը Գ. Շէնեանին, Տիար Վաչէ Իմաստունեան, Հ.Բ.Ը.Մ.ի անունով, Տիար Արմէն Լիլոյեան, գրող Թորգոմ Փօսթաճեան, Պոլսահայ Միութեան Տօքթ. Յովհաննէս Աւետիքեան, Իրա-

նահայ Միութեան անունով՝ Տիար Թոմիկ Ալեքսանեան, Իրաքահայ Միութեան կողմէ՝ Տիար Խաչիկ ճանոյեան, եւ վերջաւորութեան Տիար Երուանդ Պապայեան:

Օրուան գլխաւոր բանախօսն էր Տօքթ. Վարդան Թաշճեան որ վեր առաւ «Նոր Կեանք» շաբաթաթերթի արժանիքները, իբրեւ հրատարակութիւն - գովելի կանոնաւորութիւն, տեղեկութեան աղբիւր, հայրենասիրութիւն, անկողմնակալութիւն, հայակերտումի միջոց: Յարգելի բանախօսը իր խօսքը աւարտեց շնորհաւորելով Շէնեան գոյգը եւ յայտնելով որ «Երեսուն Տարիներ Նոր Կեանքը մեզի համար եղաւ թարգման հայ դպրութեան»:

Ընտանիքին կողմէ, շնորհակալութեան խօսք ըսաւ Շէնեաններու աւագ որդի՝ Սեւակ Շէնեան, ինչպէս նաեւ ինքը, խմբագիր Գրիգոր Շէնեան, որ իրեն յատուկ գուարթախոհութեամբ, խօսեցաւ թերթի 30-ամեակ ընթացքին եւ անոր գոյութեան հետ կապուած կարգ մը հետաքրքրական մանրամասնութեանց մասին: Նաեւ շնորհակալութիւն յայտնեց իր բոլոր աշխատակիցներուն եւ բաժանորդներուն:

Վերջին խօսքը արտասանեց Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, շնորհաւորելով Շէնեան գոյգը եւ զնահատելով «Նոր Կեանք»ի ծառայութիւնը Առաջնորդարանի լուրերու տարածման:

Յայտագրէն ետք որ յատկանշուած էր իր հեզասահ ընթացքով եւ որակաւոր ելոյթներով, ներկաները հիւրասիրուեցան պատշաճ ընդունելութեամբ մը եւ 30-ամեակի կարկանդակի բաժանումով:

Մեր շնորհաւորութիւնները Շէնեան համակրելի գոյգին եւ յաջողութիւն «Նոր Կեանք»ին:

Յ. Ս.

*In 1915, a terrible secret was buried...
Almost a century later,
it is about to be uncovered.*

One man makes an unforgettable journey into the shadows of his family's past... in the hopes of saving his own future.

KATHLEEN CHALFANT
RED DOG HOWLS
MATTHEW RAUCH DARCIE SICILIANO

A NEW PLAY BY DRAMA DESK NOMINEE
ALEXANDER DINELARIS

Original Music Composed & Performed by
ARA DABANDJIAN
Directed by
MICHAEL PERETZIAN

LIMITED ENGAGEMENT
MAY 14TH - JUNE 13TH

PERFORMANCES
MAY 14TH - JUNE 13TH
For e-tickets go to
www.reddoghowls.com

PRODUCED BY
GANGOFFIVE
NEW YORK

EL PORTAL THEATRE
5269 Lankershim Blvd.
North Hollywood
BOX OFFICE 818.508.4200
www.elportaltheatre.com

ԱՊՐԻԼ 24

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ
«Ա. ԵՒ Մ. ՅՈՎԱԵՓԵԱՆ» ԿԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

ԼԻԶԱ ՄԱՆՈՅԵԱՆ

Ապրիլ 23ի ամբողջ օրուան ընթացքին աշակերտութիւնը տարբեր եւ իւրաքանչիւր ձեռնարկներու ներկայ գտնուեցաւ: Առաւօտեան ժամը 9:30էն մինչեւ ժամը 12 մանկապարտէզէն-Դ. կարգերու աշակերտները այցելեցին Մոնթեպելլոյի Հայկական Յեղասպանութեան յուշար-



Աշակերտներու հաւաքը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջափակին մէջ

ձան, իրենց յարգանքի տուրքը մատուցելու մեր նահատակ նախահայրերուն: Իւրաքանչիւր դասարանի աշակերտներ յուշարձանին շուրջ համախմբուած միասնաբար արտասանեցին հայրենասիրական ոտանավորներ: Այս տարի ուսուցչուհիները նախաձեռնած էին եռագոյն դրօշակ մը պատրաստելու եւ այդ առիթով պահանջած էին ամէն աշակերտէ եռագոյնի գոյներէն կերպասի կտորներ, որոնց վրայ գրելով իրենց ընտանիքի անդամներուն անունները, միացուցած էին իրարու եւ կազմած էին մեր դպրոցին յատուկ հայկական դրօշակը: Աշակերտները սոյն աշխատանքը իրագործած են Մոնթեպելլոյի Յուշարձանին համալիրին շուրջ հաւաքուած: Սոյն դրօշակը իւրաքանչիւր աշակերտի մօտ առիթ մը ընծայեց խորհրդածելու, որ կանգնելով մեր սուրբ նահատակներու յուշարձանին մօտ, մեր գոյութեամբ կը փաստենք, որ թուրքը յաջողած չէ իրականացնել

հայ ազգի բնաջնջման ծրագիրը: Մինչ նախակրթարանի աշակերտները Մոնթեպելլո կը գտնուէին, Ե. կարգի եւ միջնակարգի աշակերտները հետաքրքրական հանդիպում մը ունեցան «Յեղասպանութեան ծրագիր»-ի հիմնադիրներէն Արա Օշականին հետ: Արան իր հանդիպումը սկսաւ պատասխան վրայ ցուցադրուող վերապրող մամիկի մը լուսանկարին քննարկումով: Հետաքրքրական էին աշակերտներուն մտորումներն ու արտայայտած կարծիքները, երբ նկարը դիտելով կը փորձէին երեւակայել այդ կնոջ ունեցած եւ դիմագրաւած դժուարութիւններն ու չարչարանքները: Ապա, աշակերտները իրենց կարծիքները արտայայտեցին, թէ ինչ նշանակութիւն ունէր «i witness» խորագիրը: Արային, դպրոցի տնօրէնին՝ Շահէ Մանկրեանին, եւ Զ. դասարանի կարգ մը աշակերտներու՝ վերապրողներուն վկայութիւններու փոխին ի փոխ ընթերցանութեանէն ետք, որոնք բաւական յուզում ու ցասում արթնացուցին աշակերտութեան մօտ, աշակերտները յանգեցան այն եզրակացութեան, թէ իրենց փորձանցուած ակնատեսներուն վկայութիւնները լսելէ ետք, իրենք ալ իրենց կարգին իբրեւ էրօրդ սերունդը ցեղասպանութենէն ազատող պայիկներուն եւ մամիկներուն, պարտք պէտք է համարեն տարբեր ձեւերով Եղեռնին մասին օտար շրջանակներուն խօսիլ ու ծանօթացնել մեր պատմութիւնը: Արա Օշականին ներկայացուցած զեկուցումը, դատարարական բնույթով եւ աշակերտներուն ներդրումով, իրապէս շինիչ ու հետաքրքրական դասաւանդման դասապահ մը վերածուեցաւ: Յետմիջօրէին, Ա.-Ը. կարգի աշակերտները հանդիպում մը ունեցան բեմադրիչ Ռաճըր Գուբելեանին եւ Վարդան Մամիկոնեանին մասին անոր պատրաստելիք շարժապատկերի աշխատակազմի կարգ մը արուեստագետներուն հետ: Սոյն ձեռնարկը նկատի առնուած էր այդ օրը կայացնել, յատկապէս այն իմաստով, որ հայրենիքէն հազարաւոր մղոններ հեռու ծնած ու սնած հայրերին, ի զին բարձր գոհողութիւններու, հետաքրքրուած են հայրոց պատմութեամբ եւ պատրաստ են հայ մշակույթին ու պատմութիւնը վառ պահել եւ ծանօթացնել զանոնք



Յովաէփեան վարժարանի աշակերտները Մոնթեպելլոյի Հայկական Յեղասպանութեան յուշարձան մօտ

օտարներուն, այս լիիրաւ փաստ մըն է վերապրողներուն կողմէ մեզի փոխանցած հայ ժողովուրդի վստահութիւնը: Ռաճըր Գուբելեան խօսեցաւ իր շարժապատկերի պատրաստութեան մասին ցուցադրեց բաժիններ շարժապատկերէն, ցուցադրուեցան շարժապատկերին մէջ գործածուող տարագներու նմուշներէն, որոնք ցուցադրուեցան Ը. կարգէն կրէյս Պաղտասարեանին եւ Արման Սէօյլեմեզեանին կողմէ: Ապա մարտական բաժնի պատասխանատուի հսկողութեան ներքեւ վերոյիշեալ աշակերտն ու մարզիչը «սուսերամարտ» մը ներկայացուցին աշակերտներուն, որ բաւական խանդավառութիւն ստեղծեց ներկայ աշակերտներուն եւ ծնողներուն մօտ: Այս առիթով, վարժարանի հայերէնի բաժանմունքը դրամահաւաք մը կազմակերպած էր եւ խորհրդանշական գումարով մը մասնակից դարձաւ բեմադրիչին կազմակերպած դրամահաւաքին: 351 տոլարի նուիրատուութիւն մը կատարուեցաւ աշակերտութեան կողմէ, իսկ բեմադրիչը դպրոցիս նուիրեց Վարդան Մամիկոնեանի իր գծագրութիւններէն մէկը: Ոգեկոչման այս օրը իր աւարտին հասաւ, երբ աշակերտներու հաւաք մը տեղի ունեցաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող խաչքարին շուրջ: Մէկ վայրկեան յոտնկայս յարգելէ ետք նահատակներուն լի-

շատակը, աշակերտներուն խօսքը փոխանցեց Արման Սէօյլեմեզեան, ըսելով, որ այնքան ատեն, որ մեծ պետութիւններ ընդունած չեն եւ նոյնիքն թուրքիան արդար հատուցումը տուած չէ մեզի, մենք պէտք է աշխատինք եւ տարբեր ձեւերով պահանջենք որչա՛ք աշխարհէն մեր Յեղասպանութեան ճանաչումը: Հանդիսավարներն էին Ը. կարգէն Դաւար Մարտուրեանն ու Նաթալի Մաճարեանը: Տպաւորիչ էր խաչքարին շուրջ համախմբուած կատարել ինկարկում ու մոմավառութիւն, եւ ունկնդրել Զ. կարգի աշակերտներուն խմբային արտասանութիւնը՝ Գէորգ Էմինին «Կոմիտաս Վարդապետն անապատում»ը, Ե. կարգի աշակերտուհի Քրիստին Քէշիշեանին «Միժեռնակը», Է. կարգի աշակերտուհի Ալիսին Քէշիշեանին «Ես»ը եւ Ը. կարգի աշակերտուհիներէն Վանա Գէորգի, Քրիստին Քէհէեանի եւ Մէրի Անն Ագաքեանի՝ Ս. Սիմոնեանին «Նախաձառ Յեղասպանութեանէն ետք» արտասանած ոտանավորը: Հանդիսութիւնը փակեց տնօրէնը, աշակերտներուն ուշադրութեան հրահրելով եւ ըսելով, որ իւրաքանչիւրը իր բարի գործերով պէտք է արար աշխարհին ծանօթացնէ մեր ժողովուրդն ու մշակույթը, մեր մէջ միշտ վառ պահելով մեր նահատակներուն յիշատակը: Տնօրէնը նաեւ շնորհակալութիւն յայտնեց, բոլոր այն ուսուցիչ-ուսուցչուհիներուն, որոնք աստարած էին այդ օրուան ձեռնարկներուն յաջողութեան:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԱՐԺ. ԴՈԿՏ. Տ. ԶԱԲԵՆ ԱԻԱԳ ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԿԵՐՁԻՆ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Հայց. Եկեղեցւոյ եւ Արեւմտեան Թեմի նուիրեալ հոգեւորականներէն՝ Արժ. Դոկտ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեան, որ աւելի քան յիսուն տարիներու հոգեւոր ծառայութիւն ունի, նոյն եռանդով կը շարունակէ իր հոգեւոր-գրական աշխատանքը: Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի նախագահութեամբ, Չորեքշաբթի, Մայիս 21ին, 2008 երեկոյեան ժամը 7:00ին Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն ներս տեղի պիտի ունենայ Տէր Հօր կատարած վերջին հրատարակութիւններուն շնորհանդէսը: Հեղինակը անձամբ պիտի ներկայացնէ իր գիրքերը, որոնք են. Դեռնոյ երեքի Պատմութիւնը

Ու խտանէս Եպիսկոպոսի Պատմութիւնը Ուսումնասիրութիւն Հայ եկեղեցւոյ Մասին Հայ Պատմագրութեան Կարելոր Դեմբերէն Ներածութիւն Հայ եկեղեցւոյ Աստուածաբանութեան Վերոյիշեալ հինգ գիրքերն ալ հովանաւորուած էին Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի կողմէ: Իսկ տպագրութեան մեկենասներն էին Տէր եւ Տիկ. Տէյվիս եւ Մարկրիթ Մկրտապեան: Յարգոյ հասարակութիւնը սիրով կը հրաւիրուի շնորհանդէսին, անձամբ շնորհաւորելու Արժ. Դոկտ. Տ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեանը:

Palm Springs
PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՁԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից Լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ԳՆՁԱՐԱՆ, մեծ ԳՍՏԱՍԵՆՏԱԿ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խողաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:
Վարձման գներն են՝
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400
Long Weekend-ների համար՝ \$ 500
Մէկ շաբաթուայ համար՝ \$ 675
Մէկ ամսուայ համար՝ \$ 1450
Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

ՅՈՒՇԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅ ԵԿԵՂԱՑԻՈՅ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ 81ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտնակուած էջ 8-էն

Սրբազան Հօր, որ պիտի գործածուի Առաջնորդարանի նախատեսած պիւտճէի համաձայն:

Սրբազան Հայրը Պատգամաւորներուն ներկայացուց Թեմիս Քահանայութեան Թեկնածու Վահէ Աբովեան, Մայիս Շահպատեան, Յովնան Վարդանեան, Գրիգոր Աւագեան, Արսէն Հայրապետեան, Ռայլը Թելլալեան, Մկրտիչ Քասճիքեան, Մարթին Զաքարեան, Մէթիու Աշ եւ Հայկ Տիգրանեան Սարկաւազները եւ նորակազմ երկու Ծուխերուն համար նշանակուած Հոգեւոր Հովիւները՝ յանձինս Արժ. Տ. Յովէլ Քհնյ. Օհանեանի եւ Արժ. Տ. Զաւէն Քհնյ. Մարկոսեանի եւ քաջալերեց, որ նոր հոգեւորականներու պատրաստութեան համար զօրավիճականդնէին Առաջնորդարանին:

ԵՐԲՐՈՐԴ ՆԻՍՏ

Համագումարի Երկրորդ Նիստը սկսաւ կէսօրէ ետք ժամը 1:40ին:

Թեան ընդհանուր վերատեսուծ, հոգեւորականաց թոշակի ընդհանուր վերատեսուծ: Պատգամաւորներու կողմէ պաշտօնապէս վաւերացուեցան այս առաջարկութիւնները:

ԵՐԲՐՈՐԴ ՆԻՍՏ

Պատգամաւորական Ժողովի Երրորդ Նիստը Առաջնորդ Սրբազան Հօր Նախագահութեամբ սկսաւ Շաբաթ, Մայիս 3ի առաւօտեան ժամը 9:00: Բողոքին կողմէ «Գովեա Երուսաղէմ» շարականի երգեցողութենէն ետք, Սրբազան Հայրը կատարեց բացման աղօթքը:

Ընտրութեանց Թեկնածուներու Յանձնախումբի կողմէ Արամ Քրիս Եալազեան խօսք առաւ եւ ներկայացուց Թեկնածուները: Ապա տեղի ունեցաւ ընտրութիւնը:

Թեմական Խորհուրդի կողմէ առաջարկ մը ներկայացուեցաւ, որ բացի եկեղեցոյ շէնքերէն, իւրաքանչիւր Ծուխի ա՛յլ կալուածները պատշապանելու եւ ապահով պահելու համար օրինական միջոցներու դիմ-



Պատգամաւորական Ժողովի Նիստերու ընթացքին

Յաջորդաբար շարունակուեցաւ տեղեկագիրներուն նկատառումը, ըստ հետեւեալին.-

Հոգեւորականաց Թոշակի Յանձնախումբ, Հոգեւորականութեան Թեկնածուներ Գտնող եւ Դաստիարակիչ Յանձնախումբ, Առաջնորդարանի ձամբարի Խնամակալ Մարմին, Առաջնորդարանի Ամառնային ձամբար, Հայց. Եկեղեցոյ Երիտասարդաց Կամակերպութեան Կեդրոնական Խորհուրդ, Հայ Քրիստոնեայ Առաքելութիւն Դէպի Հայաստան (CYMA) Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ-Յովսէփեան Դպրոց, Սուրբ Ներսէս Ընծայարան, Պետութեան հետ փոխ Յարաբերութեան (Protocol) Յանձնախումբ, Հայց. Եկեղեցոյ Դպրաց Դասերու Վարչական Մարմին, Գրախանութ, Առաքել եւ Շաքէ Աղա-Սարգսեան Գրադարան, «Մայր Եկեղեցի» Պաշտօնաթերթ, Առաջնորդարանի Պատկերագրող Պատի Օրացոյց եւ հրատարակութիւններ, Արեւմտեան Թեմի Մնայուն Հիմնադրամ, Խնամակալութեան Ծրագիր, Սուրբ Ծննդեան Ճաշկերոյթ-Պարահանդէսի Յանձնախումբ, Ամառնային Ուխտագնացութիւն, Հայ Արհեստավարներու Միութիւն (APN), Գէորգեան ձեմարան, Հաշուեքննիչ Յանձնախումբ, Առաջնորդարանի Նիւթական (պիւտճէի) Տեղեկագիր, Առաջարկուած Բարեփոխման Կանոնադրութեան մէջ:

Թեմական Խորհուրդի կողմէ յատուկ բարեփոխման առաջարկուած էին Թեմիս Կանոնադրութեան մէջ, որոնք էին՝ Թեմական Տուրքերու նոր բանաձեւ մը, Կանոնադրու-

ուի: Այս ծրագիրը գործադրելու համար Պատգամաւորական Ժողովը իշխանութիւն տուաւ Թեմական Խորհուրդին, որպէսզի անհրաժեշտ տնօրինէ եւ անոր արդիւնքը յառաջիկայ տարի ներկայացնէ Պատգամաւորական Ժողովին:

Թեմական Խորհուրդը եկեղեցիներուն կողմէ ամէն տարի Առաջնորդարանին տրուած Թեմական Տուրքի նոր ձեւ մը պիտի որդեգրէ:

Պիւտճէին մէջ նկատի առնուած էր Առաջնորդարանէն ներս Վարիչ Տնօրէն մը ունեալու պարագան: Ժողովը քուէարկութեամբ ինդրեց Թեմական Խորհուրդէն, որ Առաջնորդարանէն ներս ունենան Վարիչ Տնօրէն մը:

Դոկտ. Վահրամ Պիրիճիք տեղեկութիւններ տուաւ Միւռնոսհնութեան աթիւ Առաջնորդարանի կողմէ դէպի Հայաստան կազմակերպուած ուխտագնացութեան մասին:

Որոշուեցաւ յառաջիկայ տարի Թեմական Պատգամաւորական 82րդ Ժողովը գումարել Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցոյ մէջ:

Առաջնորդ Սրբազան Հօր Անգլերէնով գրուած Տարեկան Տեղեկագիրը գրքոյկի ձեւով տպուած եւ բաժնուած էր Պատգամաւորներուն: Սրբազան Հօր ներկայացուցած մանրամասն տեղեկագիրը գնահատութեամբ եւ երախտագիտութեամբ ընդունուեցաւ:

Սրբազան Հայրը յատուկ շնորհակալութիւն յայտնեց 81րդ Թեմական Պատգամաւորական Ժողովի Հիւրընկալ եւ Պատրաստութեան Յանձնախումբին, որոնք կազմակերպչա-

ԱՅՆԹԱՊԻ ԸՆՈՍԱՄԱՐՏԻ 88-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Մարտնակուած էջ 15-էն

սիրաց Վարժարանի, Ամերիկայի Սանուց Միութիւնը», որուն հիմնադիրը եղաւ պրն. Նուպար Յակոբեան, «Կիլիկեան Վարժարանի Բարեգործական Միութիւնը», «Հայաստանի Այնթապցիներու Միութիւնը» եւ այլ սանուց միութիւններ կամ կազմակերպութիւններ:

Պրն. Թորանեան ներողամտութիւնը կը հայցէր ներկաներուն իր բացակայութեան համար:

Կար ժամանակ, երբ ես կը յաճախէի Հայկապի Կրթասիրաց վարժարանը, Ջոքաք էլ Պլաթ շրջանին մէջ, անմիջական հարեւան ունենալով Ուսումնասիրաց եւ Կիլիկեան վարժարանները, եւ ոչ շատ հեռու, Այնթապցիներու այլ վարժարաններ, եկեղեցիներ եւ մշակոյթի կեդրոններ: Կը դասաւանդուէր հայերէն լեզուն, կրօնքն ու պատմութիւնը ջարդէն փրկուած հայ բեկորներուն, արաբական հիւրընկալ երկինքին տակ, վայելելով Արաբ ժողովուրդին երկարած ինամատար ձեռքի հոգատարութիւնը եւ 1924էն ի վեր ուսում եւ կրթութիւն ջամբելով հայ սերունդներուն, եւ մինչեւ այսօր:

Մենք՝ հաւանաբար երկրորդ կամ երրորդ սերունդն էինք այդ վարժարանները յաճախող, եւ հաւատացած էինք թէ այդ բոլոր ուսանողները մէկ մեծ ընտանիքի մաս կը կազմէին:

Տնօրէններ, ուսուցիչներ եւ ազգին նուիրեալ պատուարժան անձինք գոհուեցան հայ սերունդներու պահպանման ազգաշէն գործին մէջ, Այնթապի անկումէն ետք, մեծամասնութեամբ հաստատուելով Սուր-

իոյ Հայկապ քաղաքին մէջ, բանալով վարժարաններ եւ ուսման կեդրոններ հայ սերունդներուն համար: Տնօրէններ՝ պրն. Երուանդ Պապայեան, Գրիգոր Պողարեան, Արմէն Տէր Պետրոսեան, Ռուբէն Տիրարեան եւ բազում հայ ուսումնականներ որոնք կերտեցին ներկայ հայ սերունդները, վերակենդանացնելով հոգեկորոյս եւ յուսահատ ջարդէն սարդած սերունդը, բազմացնելով եւ հասցնելով զանոնք այսօրուան ուսումի, տնտեսական եւ զարգացման բարձր մակարդակներուն:

Տօնակատարութեան աւարտին, պրն. Երուանդ Պապայեան նահապետական իր սրտի խօսքը ուղղեց ներկաներուն, գովաբանեց Միութեան գործունէութիւնները եւ աշխատանքները, ապա՝ հայրենակիցներու տարած նուաճումներն ու կերտումները ամենուրէք, եւ ներկայացուց օրուան անակնկալը, Միութեան կողմէ պարգեւուած գնահատանքի շքանշանը տիկ. Աստղիկ Ապաճեան Խանճեանին, որ կը վարէ միութեան գանձապահի եւ տեղեկատուութեան պաշտօնը:

Տիկ. Խանճեան համեստաբար շնորհակալութիւն յայտնեց պրն. Պապայեանին եւ միութեան անդամներուն, ընդունելով պարգեւատրութիւնը սրտի անհուն գոհունակութեամբ եւ ըսաւ թէ՛ ազգային պարտականութեանց մէջ չափ ու սահման չի գտնուիր, եւ ինք ծնողական կրթութեամբ թրծուած, փոքր հասակէն ի վեր եղած է միշտ պատրաստակամ՝ ծառայելու իր սիրելի միութեան եւ հայ ազգին:

Տօնակատարութիւնը աւարտեցաւ Այնթապի մաղթերգով:

կան սքանչելի աշխատանք կատարած էին:

Սրբազան Հայրը անձամբ եւ Պատգամաւորներու անունով իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, իր հայրախնամ հոգածութեան եւ բարձր ուշադրութեան համար: Գնահատեց Թեմիս հոգեւորականներուն անձնուէր ծառայութիւնները եւ յատկապէս յիշեց նաեւ Երէցկիւնները, որոնք եւս Քահանայ Հայրերու կողքին իրենց ծառայութեան բաժինը կը բերեն Ծուխերէն ներս:

Կատարուած ընտրութիւններուն արդիւնքը եղաւ ըստ հետեւեալին.-

Թեմական Պատգամաւորական Ժողովի Ատենապետ՝ Իրաւաբանուհի Էտրիէրն Գրիգորեան, Փոխ Ատենապետ՝ Էտ Նիգարեան, Անգլերէնի Ատենապետի՝ Զարուհի Տէր Մկրտիչեան, Հայերէնի Ատենապետի՝ Տ. Սիրիան Աւագ Քհնյ. Միսեան:

Թեմական Խորհուրդի Հոգեւորական անդամներ՝ Արժ. Տ. Եղիա Քհնյ. Հայրապետեան եւ Արժ. Տ. Նարեկ Աւագ Քհնյ. Մատարեան: Իսկ Աշխարհական անդամներ՝ Իրաւաբան ձոգէֆ Կանիմեան, ձորճ Ուզունեան եւ Կրէկ Ջրգոյեան:

Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամներ՝ Արա Գասպեան եւ Փաթիլ Թիւֆէնքճեան:

Արեւմտեան Թեմի Մնայուն Հիմնադրամի Հոգաբարձու վերընտրուեցան Արմէն Համբար, Լիսա Գատրուտեան, Տէյլլիտ Քելէկեան, Տոքթ. Կէրի Լիւլէճեան եւ Իրաւաբան Ռիչըրտ Մուշեղեան:

Պատգամաւորական Ժողովի

աւարտին Սրբազան Հօր Նախագահութեամբ, Թեմական Խորհուրդը կարժ ժողով մը գումարեց, որու ընթացքին տեղի ունեցաւ պաշտօններու ընտրութիւնը:

Թեմական Խորհուրդի 2008-2009 թուականի կազմը հետեւեալն է.-

Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան Նախագահ

Առաջնորդ Արեւմտեան Թեմի Իրաւաբան ձոգէֆ Կանիմեան Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի (Պրպէյնք) Ատենապետ

Կրէկ Ջրգոյեան Ս. Վարդան Եկեղեցիէն, Օգլընտ Փոխ Ատենապետ

ձորճ Ուզունեան Գանձապահ Ս. Աստուածածին Եկեղեցիէն, Եղեմ Լիլի Ռիսկ Պալեան Ատենապետուհի Ս. Յակոբ Եկեղեցիէն, Լոս Անճելըս

ԱՆԴԱՄՆԵՐ. Հոգւ. Տ. Պարեա Մ. Վրդ. Երէցեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիէն Փասատինա Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցիէն, Հայկիվուտ Արժ. Տ. Եղիա Քհնյ. Հայրապետեան Ս. Յակոբ Եկեղեցիէն, Մագրամէնթօ

Արժ. Տ. Նարեկ Աւագ Քհնյ. Մատարեան Ս. Սարգիս Եկեղեցիէն, Իսթ Լոս Անճելըս

Դոկտ. Վահրամ Պիրիճիք Ս. Աստուածածին Եկեղեցիէն, Գոսթա Մեաս

Իրաւաբան ձէֆ Հազարեան Ս. Վարդան Եկեղեցիէն, Օգլընտ

Բրշ. Գարլ Սրկ. Պարտապեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիէն, Փասատինա:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ «ԱՐԱՐԱՏ»-Ը ՆՈՒԱՃԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏՊՈՒԼԻ ԳԱԲԱԹԸ

Երեւանի «Արարատ»ը 5-րդ անգամ նուաճեց Հայաստանի գաւաթը անցեալ շաբաթավերջին Իջեւանում լարուած պայքարում յաղթելով «Բանանց»ին: Թիմի գլխավոր մարզիչ Վարուժան Սուքիասեանի համար սա 4-րդ գաւաթն էր, սակայն նախորդ 3-ը Սուքիասեանը նուաճել էր այլ ակումբների հետ:



Խաղը ուղեկցուեց յորդառատ անձրեւով, առաջին խաղակէսի 37-րդ րոպէին հաշիւը բացեց «Բանանց»ի խաղացող, բուլղարացի Մարկո Մարկովը: 77-րդ րոպէին արարատցի վահագն Մինասեանը հաւասարեցրեց հանդիպման հաշիւը: Խաղի հիմնական ժամանակն աւարտուեց ոչ-ոքի՝ 1:1: Ապա նշանակուեց 30 րոպէ լրացուցիչ ժամանակ, որի աւարտից 3 րոպէ առաջ «Արարատ»ի բրազիլացի յարձակուող Մարկոսը գրաւեց «Բանանց»ի դարպասը: «Արարատ»ը յաղթեց 2:1 հաշուով:

Այս յաղթանակը թոյլ տուեց «Արարատ»ին ՈՒԵՖԱ-ի գաւաթի ուղեգիր նուաճել եւ երկարատեւ ընդմիջումից յետոյ հանդէս գալ հեղինակաւոր այս մրցաշարում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆուտպոլի Հայաստանի առաջնութեան 5-րդ տուրի կենտրոնական խաղում Երեւանի «Արարատ»ը Աբովեանի քաղաքային մարզադաշտում 2:1 հաշուով առաւելութեան հասաւ «Միկայ»ի նկատմամբ եւ ամրապնդուեց առաջին հորիզոնականում:



Եւս մէկ հետաքրքիր հանդիպում կայացաւ «Փիւնիկի» մարզաբազայում, որտեղ ախոյեանը ընդունել էր Կապանի «Գանձասար»ին:

2-րդ անընդմէջ յաղթանակը տօնեց փոխախոյեան «Բանանց»ը, որը 4:2 հաշուով առաւելութեան հասաւ ետնապահ «Կիլիկիայ»ի նկատմամբ: Գիւմրիի «Շիրակը» հիւրընկալուելիս 1:0 հաշուով յաղթեց «Ուլիսի»ն եւ հաւասարուեց 2-րդ տեղում ընթացող «Միկայ»ին:

«Ուլիս» - «Շիրակ»	0-1
«Միկա» - «Արարատ»	1-2
«Բանանց» - «Կիլիկիա»	4-2
«Փիւնիկ» - «Գանձասար»	1-1

5 փուլից յետոյ 15 միաւորով առաջատար է «Արարատը»						
«Արարատ» Երեւան	5	5	0	0	12-1	15
«Միկա» Աշտարակ	4	3	0	1	11-3	9
«Շիրակ» Գիւմրի	5	3	0	2	6-6	9
«Փիւնիկ» Երեւան	4	2	1	1	3-3	7
«Բանանց» Երեւան	5	2	1	2	5-4	7
«Գանձասար» Կապան	5	1	2	2	5-7	5
«Ուլիս» Երեւան	5	1	0	4	3-5	3
«Կիլիկիա» Երեւան	5	0	0	5	3-17	0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱՆԻ ԵԼՈՅԹՆԵՐԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Ֆուտպոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների հաւաքականն աւարտեց իր ելույթները Իտալիայի միջազգային մրցաշարում, որտեղ Արմէն Գիւլբուրդաբեկեանի սաների մրցակիցներն էին իտալական «Մոնցա», «Բրեշիա», «Վիչենցա» եւ «Յուվենթուս» ակումբների մինչեւ 19 տարեկաններ ֆուտպոլիստներով համալրուած թիմերը: Առաջին 2 խաղում Հայաստանը միեւնոյն 4:1 հաշուով յաղթել էր «Մոնցայ»ին եւ «Վիչենցայ»ին, այնուհետեւ 2:2 հաշուով աւարտել «Բրեշիայ»ի հետ հանդիպումը:

Վերջին խաղում մեր թիմի մրցակիցն էր հանրայայտ «Յուվենթուս»ի մինչեւ 19 տարեկանների թիմը: Հանդիպումը կրկին անցաւ Հայաստանի հաւաքականի բացառապատ առաւելութեամբ եւ աւարտուեց 4:1 հաշուով մեր հաւաքականի օգտին: Հայաստանի ընտրանու կազմում աչքի ընկան Նորայր Գիոզալեանը (9), Էդգար Մալաքեանը (48), Գրիգոր Մովսիսեանը (63) եւ Հենրիխ Միսիթարեանը (88): Մրցակիցը յաջողութեան հասաւ 23-րդ րոպէին 11-մետրանոցից:

Յիշեցնենք, որ Մայիսի 22-ից 27-ը Հայաստանում տեղի կ'ունենայ մինչեւ 19 տարեկան հաւաքականների Եւրոպայի առաջնութեան էլիտ ռաունդի եօթերորդ խմբի մրցաշարը, որտեղ մեր ընտրանին կը մրցի Սպանիայի, Թուրքիայի եւ Ուկրաինայի հաւաքականների հետ:

www.massisweekly.com

ՓԵՔԻՆ-2008

ԸՍԲԻՇ ՌՈՍԱՆ ԱՍՈՅԵԱՆ ՆՈՒԱՃԵՑ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ

Իտալիայում կայացած յունահռոմէական ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշարում օլիմպիական վարկանիշ է ձեռք բերել Եւրոպայի նախկին ախոյեան Ռոման Ամոյեանը:



55 կգ քաշային ըմբիշը, առաջին երկու մրցամարտերում յաղթելով մրցակիցներին, 3-րդում պարտուել է, սակայն պայքարելով 3-րդ տեղի համար, յաջողութեան է հասել եւ դարձել յունահռոմէական ոճի հայ 3-րդ ըմբիշը, որը իրաւունք է ստանում մասնակցելու Օգոստոսին ֆեքինում կայանալիք օլիմպիական խաղերին:

Մինչ այս նման իրաւունք էին նուաճել Արման Ադիկեանը եւ գերձանր քաշային Եուրի Պատրիկեանը, որոնք դեռեւս 2007թ. Սեպտեմբերին Պաքուում կայացած աշխարհի առաջնութեան ժամանակ էին ապահովել իրենց տեղը ֆեքինում:

Հայաստանի հաւաքականը դեռ հնարաւորութիւն ունի աւելացնելու ուղեգրերի քանակը: Մայիսի 21-ին Սերբիայի Նովի Սադ քաղաքում կը կայանայ վարկանիշային վերջին մրցաշարը:

Իսկ ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականը այլեւս հնարաւորութիւն չունի աւելացնելու ուղեգրերի քանակը: Յիշեցնենք, որ ազատ ոճայինները 3 ուղեգիր էին նուաճել վարկանիշային մրցաշարերում:

ԹԵՆԻՍ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱԲԱՐՏՈՒԵՑ ԴԵԻՍԻ ԳԱԲԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Մայիսի 11-ին Երեւանում աւարտուեց Դեւիսի գաւաթի խաղարկութեան եւրօպրիկեան գոտու 3-րդ խմբի մրցաշարը: Հայաստանի թենիսի հաւաքականը անյաջող մրցելոյթներ ունեցաւ խմբային մրցաշարում, 4 թիմերի պայքարում պարտուեց մոլդովացիներին, նորվեգացիներին եւ կարողացաւ յաղթել միայն Անդորրայի մարզիկներին: Խմբում մնալու համար Հայաստանի թիմը մրցեց միւս ենթախմբի ներկայացուցիչների՝ Գանայի եւ Էստոնիայի պատուիրակների հետ: Տանտէրերը կրկին պարտուեցին եւ եկող տարի հանդէս կը գան աւելի ցածր՝ 4-րդ խմբի մրցաշարում:

ԳԱԻԹ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ՝ 7-ՐԴ ՏԵՂՈՒՄ

Արժեն թինահայ թենիսիստ Դաւիթ Նալբանդեանը 2115 միաւորով շարունակում է գրաւեցնել 7-րդ տեղն աշխարհի լաւագոյն պրոֆեսիոնալ թենիսիստների վարկանիշների այսօր հրապարակուած ցուցակում:

Առաջին տեղում է շուեյցարացի Ռոստէ Ֆեդերերը՝ 6825 միաւոր, 2-րդ՝ սպանացի Ռաֆայէլ Նադալը՝ 5435 միաւոր, 3-րդ՝ սերբ Նովակ Ջոկովիչը՝ 5125 միաւոր:

Merrill Lynch
INVESTMENT BANKING
JACK KALANJIAN
Professional Financial Advisor

Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
(626) 396-2825 Direct
(626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com

"Helping the Armenian Community Build Wealth"

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՋԱՅՆԵԼ (626) 797-7680

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒՎԱԿԱՆՆԵՐ

ՅուՆիս 14	Հայրերու Օր
Օգոստոս 10	Հանգանակայից ճաշկերոյթ «Մասիս» շաբաթաթերթի
Սեպտեմբեր 21	Հայաստանի Անկախութեան Փառատօն
Հոկտեմբեր 4	Հ.Ս.Ս.ի Տարեկան Պարահանդէս
Դեկտեմբեր 31	Նոր Տարուայ Խրախճանք

ՇԱՐՑԵՐ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՐԲԱՊՂԾՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏՆԵՐԻՆ

Շարունակում է 2-էն

փոքր-ինչ կտրուած» է նրա սրբապղծութիւնը, բայց օրինակը չափազանց խօսուն է: Արձանագրենք. Թուրքիայի հետ երկխօսութեանը խոչընդոտում է այն, որ այդ երկիրը չի ճանաչում ցեղասպանութիւնը: Իսկ ինչն է խոչընդոտում իշխանութեան եւ ընդդիմութեան երկխօսութեանը. այն, որ իշխանութիւնը չի ընդունում, որ մարտի 1-ին սպանող է իրականացրել: Թուրքիան ցեղասպանութիւնը որակում է որպէս տեղահանութիւն, որի ընթացքում եղել են բազմաթիւ զոհեր: ՀՀ իշխանութիւնը, ձիշղ նոյն տրամաբանութեամբ, յայտարարում է, թէ մարտի 1-ին տեղի են ունեցել բախումներ, եւ եղել է տասը զոհ: Այսպիսով, Թուրքիան չի ընդունում ցեղասպանութիւնը, ՀՀ իշխանութիւնը՝ մարտի 1-ի սպանողը: Մի՞թէ սրբապղծութիւն չէ, որ երկխօսութեան «կոնստրուկտիվ» Արթուր Բաղդասարեանն ակամայ «նոյնացնում», մեր կարծիքով՝ զուգահեռում է 1915 թ. ցեղասպանու-

թիւնը եւ 2008 թ. մարտի 1-ի սպանողը...

Եւ էլի. շարունակելով զուգահեռը՝ արձանագրենք. 1915 թուականին հայերին սպանում էին իրենց ազգային պատկանելութեան համար: 2008 թ. մարտի 1-ին հայերի դէմ գէնք կիրառուեց իրենց քաղաքական հայեացքների համար: Ազնուութեա՞ն արտայայտութիւն է արդեօք՝ ցեղասպանութիւնը դատապարտելով՝ չդատապարտել մարտի 1-ը. աւելին, մարտի 1-ի մեղքը բարդել իրենց քաղաքական հայեացքների համար կալանաւորուած քաղբանտարկեալների վրայ:

Ասում եք՝ երկխօսութիւն: Պատասխանէք, ուրեմն, առաջադրուած հարցերին եւ առաջադրէք ձեր հարցերը, եթէ ունէք: Պատասխանէք առանց երեսպաշտութեան եւ առանց փաստերը նենգափոխելու: Թէ՞ կը գերադասէիք առաջադրուած հարցերին պատասխանելու փոխարէն այդ հարցերը հնչեցնելու համար յարուցել քրէական գործ եւ խափանման միջոց ընտրել կալանքը:

ՎԱՍԱԿ ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԻՍԿ ՄԵՂԱԴՐՈՂՆԵ՞ՐՆ ՈՎԵՐ ԵՆ

Շարունակում է 2-էն

նից:

Այս ցանկը կարելի է երկար շարունակել. Արթուր Բաղդասարեան, Վահան Յովհաննիսեան, Տիգրան Թորոսեան, զանազան շաւարչ-քոչարեաններ ու խոսրովյարութիւնեաններ եւ այլն: Հովիկ Աբրահամեանի մասին ընդհանրապէս խօսել չարժէ. նրա անցած ուղին այնպիսին է, որ անխուսափելիօրէն կանգնելու է դատարանի առաջ՝ անկախ նրանից, թէ ինչպէս կը զարգանան ներքաղաքական իրադարձութիւնները: Բայց ուշադրութիւն դարձրէք՝ համաժողովրդական շարժմանը «դաւաճանութեան» մէջ մեղադրողների շարքերում ոչ մի սովորական քաղաքացի չկայ: Ամօթ չլինի հարցնելը՝ բա՞նա՞ր կորան ընտրութիւններից

առաջ հեռուստատեսիւններից իրենց ձայնը «յարգելի Սերժ Ազատիչին» տուող շարքային քաղաքացիները: Թէ՞ շտաբները փակուել են, ու որեւէ մէկն այլեւս տեսախցիկների առջեւ խօսելու համար 30 հազար դրամ չի տալիս:

Փաստն այն է, որ ժողովուրդն այսօր Լեւոն Տէր-Պետրոսեանի կողքին է: Իսկ ուե՛ժիմի կողքին միայն նրանք են, ովքեր պարզապէս զնալու ուրիշ տեղ չունեն: Այնպէս որ, ամէն անգամ համաժողովրդական շարժման դէմ հնչած վայրահաչութիւնները լսելիս առաջին հերթին ինքներդ ձեզ հարցրէք՝ ո՞վ է խօսողը եւ ինչո՞ւ է խօսում: Գուցէ պարզուի, որ իսկապէս մեծ հայրենասէր է. «մզկիթ մը շինել տուած է»:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

«Մասիս»ի համակրական շրջանակէն՝ Ստեփան Ասթաճեան զնահատելով թերթիս բովանդակութիւնն ու գաղափարական ուղղութիւնը \$100 տոլար կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին:

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:00
Կլէնտոյլի 280-րդ կայանից

ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ

ՇՆՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ՎԼԵՆՏԷՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ԲՐԵՍԵՆՅԱ)
GLOABCAST SATELLITE

Հիւնդուսթի ԵՐԵՎԱՆԻ ԺԱՍԸ 10:00-11:00

Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ր Ալիքի Վրայ

Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը
Շաբաթը 7 օր անվճար
Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ
Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել
Հայկական Թելեժամ (818) 982-2400

The Armenian Teletime Is Back On Channel 18

Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day
7 Days Per Week, Free

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax : -----

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...

Մեծ ժողովրդականութիւն Վայելող
Կլէնտոյլի AMGA 280-րդ Ալիքը
Այժմ Կը Սփռուի
GlobeCast

Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի

Ամբողջ Տարածքին

Դուր Կրնաք Դիտել

Հայաստանեան Լուրեր

Քաղաքական Վերլուծութիւններ

Երաժշտական Հաղորդումներ

եւ այլն

Մանրամասնութիւններու Համար
Հեռահայել 818.547.9696




AGBU



LARK MUSICAL SOCIETY

Zemiré

Չ Է Մ Ի Ր Է



A New Production by
AGBU ARDAVAZT THEATER COMPANY
AND
LARK MUSICAL SOCIETY

Dikran Tchouhadjian

ZEMIRÉ

Opera Semiseria in Four Acts

Stage Director:
KRIKOR SATAMIAN

Music Director:
VATSCHE BARSOUMIAN

A large cast of singers, actors, chorus,
orchestra and supernumeraries.

Friday
May 30, 2008, 8:00 pm
Saturday
May 31, 2008, 8:00 pm
Sunday
June 1, 2008, 3:30 pm

Pasadena Civic Auditorium
300 East Green Street
Pasadena, CA

